



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հաշվետու տարում Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի (այսուհետ՝ Վերահսկիչ պալատ) գործունեությունն իրականացվել է՝ *Հայաստանի Հանրապետության Սահմանադրության* և «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Վերահսկիչ պալատի 2013 թվականի գործունեության տարեկան ծրագրին (այսուհետ՝ Տարեկան ծրագիր) համապատասխան:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը կազմելիս Վերահսկիչ պալատն առաջնորդվել է «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքով և *Բարձրագույն վերահսկիչ մարմինների միջազգային կազմակերպության* (INTOSAI) սկզբունքներով:

Վերահսկողության արդյունքներն ամփոփվել են Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվություններում:

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, վերահսկվող օբյեկտների ղեկավարները Վերահսկիչ պալատին տրամադրել են տեղեկատվություն հայտնաբերված և ընթացիկ հաշվետվություններում անրագրված խախտումները վերացնելու ուղղությամբ:

Տարեկան ծրագրի կատարման արդյունքների մասին առավել մանրամասն տեղեկատվությունը տեղադրված է Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2. ՎԵՐԱՀԱՍՏԱՎՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2.1. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Գնումների ոլորտը Վերահսկիչ պալատի համար վերահսկողական կարևոր առաջնահերթություն է: Հաշվի առնելով նաև նախորդ տարիների վերահսկողության արդյունքները՝ 2013 թվականին Վերահսկիչ պալատն առաջին անգամ փորձել է գնահատել համակարգի արդյունավետությունը:

2013 թվականին Վերահսկիչ պալատը վերահսկողությունն իրականացրել է հաշվետու տարվա ընթացքում կատարված գործարքների նկատմամբ, որը հնարավորություն է ընձեռնել, արձանագրելով խախտումն ու թերությունը, տեղում շտկել և ուղղել իրավիճակը: Արդյունքում, տնտեսվել են պետական բյուջեի միլիոնավոր գումարներ:

Յուրաքանչյուր ծրագրի նկատմամբ հետևողական վերահսկողական աշխատանքը տալիս է իր դրական արդյունքները, օրինակ՝ գյուղատնտեսական կենդանիների համար նախատեսվող պատվաստանյութերի գնման գործարքների տևական վերահսկողության արդյունքում ներկայումս ՀՀ կառավարությունը դրանք ձեռք է բերում անհամեմատ ողջամիտ գներով:

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս պատվաստանյութի ձեռքբերման գների դինամիկան ըստ տարիների:

Տարեթիվը	Մեկ դոզայի գինը /դրամ/	Մատակարար կազմակերպությունը	Արտադրողը
2008թ	290.0	«Բիո Ունիվերսալ» ՍՊԸ	"Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն" /ՓԳԵՄ "ՅՈՒՆԻՅՈՒՆ" ՈՒ
2009թ	290.0	«Բիո Ունիվերսալ» ՍՊԸ	"Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն" /ՓԳԵՄ "ՅՈՒՆԻՅՈՒՆ" ՈՒ
2010թ	234.0	«Բիո Ունիվերսալ» ՍՊԸ	"Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն" /ՓԳԵՄ "ՅՈՒՆԻՅՈՒՆ" ՈՒ
2011թ	212.5	Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	"Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն" /ՓԳԵՄ "ՅՈՒՆԻՅՈՒՆ" ՈՒ
	221.0		
2012թ	208.0	«Բիո Ունիվերսալ» ՍՊԸ	"Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն" /ՓԳԵՄ "ՅՈՒՆԻՅՈՒՆ" ՈՒ
2013թ	198.0	«Ամասիա» ՍՊԸ	"Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն" /ՓԳԵՄ "ՅՈՒՆԻՅՈՒՆ" ՈՒ

Սակայն Վերահսկիչ պալատի ընթացիկ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռևս հնարավոր է այդ գնման արդյունավետությունն էլ ավելի բարելավել՝ խնայելով պետական բյուջետային միջոցները:

Վերահսկիչ պալատը հաշվետու տարում անդրադարձել է նաև գնումների համակարգում առկա խնդիրների ու ռիսկերի վերացման նպատակով ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումներին: Վերահսկողության արդյունքների հիման վրա ներկայացվել են առաջարկություններ, որոնց քննարկման շրջանակներում մեծ մասն ընդունվել են:

Բարեփոխումների շրջանակը բավականին ընդգրկում է: Ներկա փուլում հարկ է անդրադառնալ դրանցից առավել առանցքային հետևյալ ուղղություններին՝ **«իրավական դաշտի կատարելագործում»**, **«էլեկտրոնային գնումների համակարգի ներդրում»**, **«գնագոյացման մեխանիզմների կատարելագործում»**:

Մասնավորապես, հիմք ընդունելով Վերահսկիչ պալատի 2012 թվականի առաջարկը, ՀՀ կառավարությունը 2013թ. ապրիլի 18-ի թիվ 441-Ն որոշմամբ պարբերաբար կրկնվող գնումների /ապրանքների/ դեպքում սահմանել է պետական կարգավորիչ «հսկիչ» գներ:

Սակայն, հաշվետու տարում Վերահսկիչ պալատի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ոչ բոլոր կարգավորիչ գներն են համապատասխանել տվյալ պահին շուկայում գործող գներին: Բացի այդ, ուսումնասիրությամբ պարզվեց, որ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ նախատեսված գործընթացը ճկուն չէր, չէր արտացոլում շուկայի ընթացիկ վիճակը, մասնավորապես չէր նախատեսում ապրանքների սեզոնային գների տատանումների հնարավորությունը:

Վերահսկիչ պալատի և ՀՀ ֆինանսների նախարարության աշխատանքային համագործակցության արդյունքում տվյալ որոշումը փոփոխվեց:

Ներկայումս, ձեռքբերվող ապրանքների գների առավելագույն շեմերը սահմանվում են ավելի ճկուն մեխանիզմով: Մասնավորապես, հիմք ընդունելով Գնագոյացման վերլուծական կենտրոնի կողմից կատարվող մշտական դիտարկումները, հսկիչ գները պարբերաբար սահմանվում են Ֆինանսների նախարարի հրամանով:

Գնումների համակարգում կռուպցիոն ռիսկերի նվազեցման շրջանակներում տվյալ գործընթացն ակնհայտ առաջընթաց է և այն հետևանք է նաև ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացվող մշտական վերահսկողության:

Թեև ՀՀ կառավարությունը միջազգային կառույցների հետ պարբերաբար բարեփոխում է գնումների օրենսդրությունը, սակայն Վերահսկիչ պալատի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած գործարքի շահառու կողմերի գործողությունները օրենսդրության շրջանակներում են, այնուամենայնիվ ֆիզիկական, փաստագրական և վերլուծական ապացույցներով պարզվում է, որ տվյալ գնումն անարդյունավետ էր:

Ինչ վերաբերում է 2004 թվականին մեկնարկած «էլեկտրոնային գնումների համակարգի» ներդրման գործընթացին, ապա պետք է ևս մեկ անգամ հիշատակել, որ թեև 2011 թվականին ՀՀ ֆինանսների նախարարությունը պաշտոնապես հայտարարեց, որ էլեկտրոնային գնումների համակարգն արդեն ձևավորված է, և որ շուտով հանրային գնումները կիրականացվեն արդեն լավագույն ճանապարհով: **2012 թվականին Վերահսկիչ պալատի կատարած դիտարկումները ցույց տվեցին, որ համակարգը փաստացի չէր գործում, և նույնիսկ գործընթացում խնդիրները գնալով**

ավելանում էին: Դեռ ավելին, ծրագրի բանալիները /կողերը/ պարզապես գոյություն չունեին: Ծրագիրը չէր աշխատում:

Այդ փաստը 2012 թվականի տարեվերջին պաշտոնապես ընդունվեց նաև Ֆինանսների նախարարության կողմից: **Այսինքն՝ օգտագործված ռեսուրսները չտվեցին ակնկալվող արդյունքը:**

Այնուհետև, ՀՀ ֆինանսների նախարարության նախաձեռնությամբ մշակվեց էլեկտրոնային գնումների համակարգի բարեփոխումների 2013-2015 թթ. ճանապարհային քարտեզ, որով նախատեսվեց շտկել խափանված համակարգը:

2013 թվականին Վերահսկիչ պալատը կրկին անդրադարձել է գնումների ոլորտին, արձանագրելով, որ թեև բազմաթիվ պայմանագրեր արդեն կնքվում են տեխնիկական բնութագրերին համահունչ, այնուամենայնիվ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համակարգի ձևավորման աշխատանքները լիարժեք և ավարտված չեն: Կան դեռևս չլուծված հիմնախնդիրներ և տեխնիկական սահմանափակումներ: Ակնհայտ է, որ ներկա փուլում էլեկտրոնային գնումների «հատվածային» ներդրման արդյունքում գնումների արդյունավետության և թափանցիկության բարձրացման ակնկալիքները դեռևս չեն ապահովվում: Դրա մասին էվկայում նաև վերջերս Եվրոպական Հանձնաժողովի կողմից կատարված դիտարկումները, ըստ որոնց, գնումների ոլորտում Հայաստանում առցանց ծառայությունների բարելավման աստիճանը դեռևս ցածր է: Հայաստանը 190 երկրների ցանկում զբաղեցնում է 94-րդ տեղը:

Գնումների կազմակերպման գործընթացում բացահայտվել են բազմաթիվ խախտումներ և թերություններ, որոնք հիմնականում պայմանավորված են ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168 որոշման պահանջների խախտմամբ: Այսպես.

Առանձին գնման համար պատասխանատու պատվիրատու գերատեսչության ներկայացուցիչները, խտրական վերաբերմունք ցույց տալով, որոշ ընկերությունների թույլ են տալիս կնքել բարձր գներով պայմանագրեր, որոնց արդյունքում պետական միջոցները չեն տնտեսվում, իսկ որոշ անձինք ստանում են գերշահույթ: Այսինքն՝ ներկայացված գնային առաջարկի հիմնավորվածությունը չի ստուգվում:

Ակնհայտ է, որ հիմնական պատճառն այն է, որ գնումն իրականացնելուց առաջ գնահատող պատասխանատու հանձնաժողովները, խախտելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168 որոշման պահանջները, լիարժեք չեն ուսումնասիրում շուկայում գործող գները:

Հատկանշական է, որ մասնավոր ընկերությունը որևէ ապրանք, աշխատանք կամ ծառայություն չուկայում մեկ այլ մասնավոր ընկերությունից ձեռք է բերում ավելի ցածր գնով:

Որոշ դեպքերում պետության իրական կարիքները չեն գնահատվում և արդյունքում ձեռքբերվող ապրանքը կամ աշխատանքն ու ծառայությունը հետագայում որևէ կերպ չի ծառայում իր նպատակին կամ մասնակի է ծառայում: Նվազում է գնումների նպատակայնությունն ու հասցեականությունը:

Բացահայտվում են դեպքեր, երբ որևէ սարքավորման ձեռքբերումից հետո է միայն պարզվում, որ տվյալ պետական մարմինն ինչ-ինչ պատճառներով ի վիճակի չէ այն օգտագործել:

Կամ մատուցված խորհրդատվությունը, որը նպատակ ունի լուծելու որևէ խնդիր, այդպես էլ չի ծառայում իր նպատակին: Դա պատճառ է այն բանի, որ չկան արդյունքային հստակ ցուցանիշներ:

Արձանագրված խախտումներն ու թերությունները, խնդիրներն ու կոռուպցիոն ռիսկերը կարելի է խմբավորել հետևյալ ուղղություններով.

ՆՈՒՅՆ ԱՊՐԱՆՔԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼ Է ՏԱՐԲԵՐ ԳՆԵՐՈՎ

Համանման գնման դեպքում ու միևնույն կարիքի բավարարման համար պետական և համայնքային տարբեր կառույցներ ծախսում են տարբեր գումարներ: Մի դեպքում ավելի քիչ է ծախսվում, մեկ այլ դեպքում՝ ավելի շատ:

Որպես օրինակ կարելի է նշել՝

- Երևան քաղաքի վարչական շրջաններում միևնույն տեխնիկական բնութագրերով սննդամթերքի ձեռքբերման նախահաշվային գները տարբեր են: **Օրինակ՝**

Գնման առարկայի անվանումը	Շենգավիթ	Կենտրոն	Նորք-Մարաշ	Մալաթիա-Սեբաստիա	դրամ երեբունի
Բուսական յուղ	990	1000	890	850	950
Շաքարավազ	490	495	450	420	500
մակարոնեղեն	460	450	375	320	450
հնդկաձավար	890	950	590	550	1000
բրինձ	430	450	420	400	450

Գնման գործընթացում հաղթող ճանաչված ընկերությունները տարբեր վարչական շրջանների մանկապարտեզներին որոշ ապրանքատեսակներ, որոնց տեխնիկական բնութագրերը նույն են, մատակարարել են տարբեր գներով:

«ՏԻՍԱ» ՓԲԸ /մատակարար/						դրամ
Ապրանքատեսակ	Դավթաշեն	Կենտրոն	Շենգավիթ	Ավան	Մալաթիա - Սեբաստիա	
Շաքարավազ	490	480	490	450	406	
Լոբի հատիկավոր	850	987	750	770	687	
Մակարոնեղեն	450	445	460	395	318	
Գազար	370	319	330	250	264	
Կանաչ լոբի	350	660	450		360	
Կարտոֆիլ	250	220	250	150	150	
Կաղամբ	250	238	240	180	180	

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Ա/Ձ /մատակարար/			
Ապրանքատեսակ	Արաբկիր	Քանաքեռ-Զեյթուն	Նոր-Նորք
Հավի կրծքամիս	2200	1800	1870
Հնդկաձավար	600	550	650
Հաճար	650	600	700
Թխվածքաբլիթ	800	700	840
Կարտոֆիլ	250	200	250

• Կրթության և գիտության նախարարության «Հատուկ կրթություն» և «Մասնագիտացված հանրակրթական ուսուցում» ծրագրերով ֆինանսավորվող ՊՈԱԿ-ների սննդամթերքի գնման պայմանագրերով նախատեսված որոշ ապրանքատեսակների գները չէին համապատասխանում նույն տեխնիկական բնութագրերով ապրանքատեսակների շուկայական գներին: Դեռ ավելին, նույնանուն սննդի տեսականին միևնույն մատակարարի կողմից ՊՈԱԿ-ներին մատակարարվել է տարբեր գներով, մասնավորապես.

«ՏԻՍԱ» ՓԲԸ-Գ՝

- հաճարը մատակարարել է 440-720 դրամով, այն դեպքում, երբ շուկայում նվազագույն գինը կազմել է 300 դրամ,
- կարտոֆիլը մատակարարել է 146-220 դրամով, այն դեպքում, երբ շուկայում նվազագույն գինը կազմել է 100 դրամ,
- շաքարավազը մատակարարել է 435-496 դրամով, այն դեպքում, երբ շուկայում նվազագույն գինը կազմել է 372 դրամ:

«Դանինի» ՍՊԸ-Գ՝

- բրինձը մատակարարել է 400 և 430 դրամով, այն դեպքում, երբ շուկայում նվազագույն գինը կազմել է 328 դրամ,
- հնդկաձավար մատակարարել է 600 և 650 դրամով, այն դեպքում, երբ շուկայում նվազագույն գինը կազմել է 420 դրամ,
- կարտոֆիլը մատակարարվել է 160 և 180 դրամով, այն դեպքում, երբ շուկայում նվազագույն գինը կազմել է 100 դրամ և այլն:

Ուսումնասիրված ապրանքատեսակները պայմանագրերով նախատեսված քանակներով շուկայական միջին գներով ձեռք բերելու դեպքում «սննդի ձեռքբերում» հողվածով հնարավոր տնտեսումը «Հատուկ կրթություն» և «Մասնագիտացված հանրակրթական ուսուցում» ծրագրերով կարող էր կազմել 46,812.0 հազ. դրամ:

ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ԳՆՈՒՄՆԵՐ

Որոշ ապրանքների գնման պայմանագրերը չեն կնքվում տվյալ ապրանքն արտադրող կամ ներմուծող կազմակերպության հետ: Արդյունքում առաջանում է միջնորդավորված գնում:

Եղել են դեպքեր, երբ տվյալ ապրանք ներմուծողը կամ արտադրողը մասնակցել է համապատասխան մրցույթին և իբրև ավելի բարձր գնային առաջարկ ներկայացնող» հաղթող չի ճանաչվել: Արդյունքում որևէ միջնորդ կազմակերպություն հաղթող է ճանաչվում և հետագայում այդ ապրանքը, նախապես, ձեռք է բերում այդ նույն

ներմուծողից կամ արտադրողից, և հետագայում մատակարարում համապատասխան գերատեսչությանը:

Որոշ միջնորդ կազմակերպություններ նույնիսկ այնքան են «ՄԱՍՆԱԳԻՏԱՑԵԼ» պետական գնումներում, որ մասնակցում և հաղթում են միմյանցից բացարձակապես տարբերվող ոլորտներում կազմակերպվող մրցույթներում: Մատակարարում են միմյանցից ծայրահեղ տարբերվող ապրանքատեսակներ:

Այդ ամենը հանգեցնում է ապրանքի ավելորդ թանկացմանն ու պետական ծախսերի ցածր արդյունավետությանը:

Որպես օրինակ կարելի է նշել՝

- Անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ ավիացիոն եղանակով քիմիական պայքարի իրականացման նպատակով 2012 և 2013 թվականներին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը «Ագրո էյր Սերվիս» ՍՊԸ-ի հետ կնքել է պայմանագրեր: Սակայն, քանի որ տվյալ ընկերությունը չի ունեցել տեխնիկական բնութագրով պահանջվող առնվազն մեկ ինքնաթիռ, դելտապլան կամ ուղղաթիռ, իր հերթին, պահանջված ինքնաթիռի/ուղղաթիռի առկայությունն ապահովելու համար պայմանագիր է կնքել «Արմ Աէրո» ՓԲԸ-ի հետ¹:

Պարզվել է նաև, որ «Ագրո էյր Սերվիս» ՍՊԸ-ի տնօրենը ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակից է, իսկ ընկերության աշխատակիցների մի մասը (որոնք ընդունվել են աշխատանքի միայն ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը ծառայությունների մատուցման ժամանակահատվածի համար) հանդիսանում են «Արմ Աէրո» ՓԲԸ-ի աշխատակիցներ:

Դեռ ավելին, «Ագրո էյր Սերվիս» ՍՊԸ-ի 2012թ.-ի հասույթի 100%-ը և 2013թ.-ի հասույթի 94.65%-ը ձևավորվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ կնքված պայմանագրերից:

Եթե նախարարությունը տվյալ պայմանագրերը կնքեր ոչ միջնորդավորված, այլ փաստացի ծառայություններ մատուցող կազմակերպության հետ, ապա կտնտեսվեր տնտեսել 45,510.0 հազ. դրամ:

- Պաշտպանության նախարարությունը շաքարավազ գնելու համար «Դանիմի» ընկերության հետ կնքել է պայմանագիր՝ 394,838.1 հազ. դրամ արժեքով, մեկ կգ՝ 370 դրամ: «Դանիմի» ընկերությունը շաքարավազ արտադրող կամ ներմուծող չի հանդիսանում և այն գնել է ներմուծող «Ալեքս Գրիգ» ՍՊԸ-ից, մեկ կգ՝ 360 դրամով:

Շաքարավազը ներմուծողից գնելու դեպքում գնային տարբերության հաշվին կտնտեսվեր 9,781.6 հազ. դրամ:

- Պաշտպանության նախարարությունը կերակրի աղ գնելու համար «Դանիմի» ընկերության հետ կնքել է պայմանագիր՝ 30,302.4 հազ. դրամ արժեքով, մեկ կգ՝ 120 դրամ: «Դանիմի» ընկերությունը կերակրի աղ արտադրող կամ ներմուծող չի հանդիսանում, և այն գնել է արտադրող՝ «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ից, մեկ կգ՝ 114 դրամով: Արտադրողից գնում կատարելու դեպքում գնային տարբերության հաշվին կտնտեսվեր 1,515.1 հազ. դրամ:

¹ «Արմ Աէրո» ՓԲԸ-ն գործում է ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում :

- Կրթության և գիտության նախարարության «Հատուկ կրթություն» և «Մասնագիտացված հանրակրթական ուսուցում» ծրագրերով ֆինանսավորվող ՊՈԱԿ-ների կողմից իրականացված սննդամթերքի գնումների ընթացակարգերի ուսումնասիրությունից պարզվեց, որ սնունդը հիմնականում մատակարարել է «Տիսա» ՓԲԸ-ն և «Դանիմի» ՍՊԸ-ն, որոնց հետ կնքվել է 520,392.1 հազ.դրամի, այդ թվում «Տիսա» ՓԲԸ-ի հետ` 312,114.3 հազ. դրամի, «Դանիմի» ՍՊԸ-ի հետ` 208,287.8 հազ. դրամի պայմանագրեր: Վերջիններս մատակարարված սննդամթերքի ներմուծող կամ արտադրող չեն:

- Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության և «Դանիմի» ՍՊԸ –ի միջև կնքված պայմանագրով նախատեսվել է 140,448.0 հազ. դրամ գումարային արժեքով 88000 կգ մսի պահածոյի գնում (1 կգ 1596 դրամ): Գնման ընթացակարգի արդյունքում հաղթող է ճանաչվել «Դանիմի» ՍՊԸ-ն մեկ կգ 1596 դրամ առաջարկված գնով: Գնման ընթացակարգին մասնակցել է նաև «Համլետ Յոլսեփյան» Ա/Զ-ն, որը հանդիսանում է մսի պահածո արտադրող: Վերջինս մեկ կիլոգրամ մսի պահածոն առաջարկել է 1650 դրամ կամ 54 դրամով ավելի (1650-1596) քան գնման ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված ՍՊԸ-ն: Մրցույթում հաղթած «Դանիմի» ընկերությունը մսի պահածոն հետագայում գնում է «Համլետ Յոլսեփյան» Ա/Զ-ից մեկ կիլոգրամը 1420 դրամով: Մատակարարի կողմից ձեռք բերված մեկ կգ մսի պահածոյի գնման գնի և մատակարարման գնի տարբերությունը ամբողջ քանակի համար կազմում է 15,488.0 հազ. դրամ:

ՈՂ ՌԵԶԻԴԵՆՏ ԵՎ ՕՖՇՈՐԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳՆՈՒՄՆԵՐ

Ակնհայտ կերպով ավելացել է ոչ ռեզիդենտ ընկերությունների մասնակցության ակտիվությունը պետական գնումներում: Տվյալ դեպքում ռիսկային է համարվում այն, որ ոչ ռեզիդենտները մրցույթներում ստանում են շահեկան դիրք:

Այդ ընկերությունների համար շահեկան է նաև այն, որ կախված իրենց կազմակերպարավական տեսակից, ՀՀ-ում պետական հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինները տվյալ գնման դեպքում չեն կարողանում լիարժեք կերպով իրականացնել վերահսկողություն:

Որպես օրինակ կարելի է նշել`

Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կողմից կազմակերպված շինանյութի, հանդերձանքի, կենցաղային սարքավորումների, տնտեսական, սանիտարահիգիենիկ, լվացող միջոցների գնման ընթացակարգերին մասնակցել և հաղթող են ճանաչվել «Տիսա» ՓԲ և «Ավանգարդ» ՍՊ ոչ ռեզիդենտ ընկերությունները, որոնց հետ կնքվել է 127,619.6 հազ. դրամի պայմանագրեր:

Ոչ ռեզիդենտի կողմից ՀՀ հարկային գործակալներին գույքի և այլ ակտիվների օտարումից ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելաճը հարկվում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան: Այսինքն, հարկային գործակալները պարտավոր են ոչ ռեզիդենտին վճարվող եկամուտներից վճարման աղբյուրին մոտ հարկը պահել (գանձել) վճարվող եկամտից (հավելաճից) 10 % դրույթաչափով, իսկ հիմնավորող փաստաթղթերի

բացակայության դեպքում՝ հարկի դրույթաչափը կիրառվում է ոչ ռեզիդենտի կողմից օտարվող ակտիվների ամբողջ արժեքի (իրացման գներով) նկատմամբ:

Ոչ ռեզիդենտի շահութահարկի հաշվարկման, գանձման և ՀՀ պետական բյուջե փոխանցման պարտավորությունը, որպես հարկային գործակալի, այս դեպքում քրեակատարողական ծառայությանն է, որը չի ապահովվել: Արդյունքում, համապատասխան չափով նվազել են ՀՀ պետական բյուջեի մուտքերը:

Նկատելի է ոչ ռեզիդենտ ընկերությունների «արհեստական ճանապարհով» ստեղծման և դրանց առկայության օգտագործման դեպքեր: Մասնավորապես, որևէ մրցույթով հետաքրքրված տեղական ընկերությունը միտումնավոր ստեղծում է որևէ ոչ ռեզիդենտ ընկերություն կամ կապ է հաստատում համանման ընկերության հետ, որպեսզի շահեկան դիրք գրավելու արդյունքում կարողանա հաղթող ճանաչվել մրցույթում և կնքել պայմանագիր:

Արդյունքում, որոշ ոչ ռեզիդենտների մասնակցությունը պետական գնումներին դառնում է զուտ ձևական, զուեարները փոխանցվում են Հանրապետությունից դուրս: Նվազում է նաև վերահսկելիությունը:

Որպես օրինակ կարելի է նշել՝

- 2012 թվականին տոհմային երինջներ մատակարարելու համար 19.12.2011թ.-ին Գյուղատնտեսության նախարարությունը պայմանագիր է կնքել «ԴԱԽԽԱՆ» ՍՊԸ և Ա/Ձ Սամվել Ամիրխանյան կոնսորցիումի հետ: Ընկերությունը երինջները ձեռք է բերել Agro-Vest Plus s.r.o. չեխական ընկերությունից, որը ստեղծվել է 2012թ. փետրվարի 29-ին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ պայմանագիրը կնքելուց և գումարը փոխանցելուց հետո: Դրա հիմնադիրը հանդիսանում է Էդիկ Ամիրխանյանը, ով կոնսորցիումի մասնակիցներից «ԴԱԽԽԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Ռադիկ Ամիրխանյանի և Չեխիայում գրանցված Ա/Ձ Սամվել Ամիրխանյանի եղբայրն է:

Մատակարարված երինջների մաքսային հայտարարագրերի համաձայն, մեկ երինջի մաքսային արժեքը կազմել է 1,371,195 դրամ (ընդամենը 287,950.9 հազ. դրամ՝ 210 երինջի համար) այն դեպքում, երբ պայմանագրի արժեքը եղել է 270,900.0 հազ. դրամ: Հետևաբար՝ կոնսորցիումը, ըստ ներկայացված փաստաթղթերի, իբրև կրել է 17,050.9 հազ. դրամի վնաս:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը պայմանագիրը կնքել էր 210 երինջների ձեռքբերման համար, սակայն նախարարության անունով մաքսագերծվել է 230-ը: Agro-Vest Plus s.r.o. չեխական ընկերության հաշիվ-ապրանքագրերով բոլոր 230 երինջների համար, որպես գնորդ, նշված է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, իսկ որպես վճարող՝ «ԴԱԽԽԱՆ» ՍՊԸ-ն:

- Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների 2-րդ ռազմավարության իրականացման դրամաշնորհային ծրագրի շրջանակում հաշվապահական հաշվառման իրավական ակտերի նախագծերի և ձեռնարկի ամբողջական փորձարկման ու հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգի ներդրման աշխատանքների ձեռքբերման համար «Four Assist Development Consulting Limited» (Կիպրոս) կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր 704.1 հազ. ԱՄՆ դոլար արժեքով, որն ամբողջությամբ (բացառությամբ հարկերի) փոխանցվել է Կիպրոս՝ ընկերության հաշվին: Կիպրոսյան ընկերությունն իր հերթին պայմանագրի կնքման մույն օրը, պայմանագրով նախատեսված խորհրդատվական ծառայության

մատուցման համար, 288.0 հազ. ԱՄՆ դոլար արժեքով ենթամատակարարի պայմանագիր է կնքել ՀՀ-ում գրանցված «Փի-էյջ –Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ի հետ:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների **ողջ ծավալը** ենթամատակարարի պայմանագրով իրականացրել է «Փի-էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ն:

- Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների թվով 159 մանկապարտեզների կողմից կնքված թվով 498 գնման պայմանագրով սննդամթերքի մատակարարման գումարը 2013 թվականի համար կազմել է 2,577,746.4 հազ. դրամ, որից միայն 1,328,946.2 հազ. դրամը կնքվել է ոչ ռեզիդենտ «Տիսա» ՓԲԸ-ի հետ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՓԱՍՏԱՅԻ ԾԱԽՍԵՐ

Վերահսկիչ պալատի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պետական բյուջեում զգալի գումարներ պլանավորվում են որպես աշխատավարձ, դրամաշնորհներ, սուբսիդիաներ և այլն, սակայն հետագայում դրանք փաստացի ծախսվում են գնումների ընթացակարգերով:

Որպես օրինակ կարելի է նշել`

- Կրթության և գիտության նախարարության «Համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ» ծրագրով 2013 թվականի պետական բյուջեով` 861,169.1 հազ. դրամ գումար է նախատեսվել «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին «դրամաշնորհ» տնտեսագիտական հոդվածով, մինչդեռ այդ գումարի շուրջ 90% օգտագործվել է գնման ընթացակարգերով:

- ՀՀ կառավարության աշխատակազմի պահպանման ծախսերից 124.0 մլն դրամը տեղափոխվում է նույն կառույցի մեկ այլ ծրագիր և 100%-ով ծախսվում գնումների ընթացակարգով (տրանսպորտային միջոցներ, համակարգիչներ, գույք և այլն):

Արդյունքում, պետական գնումների ծավալի իրական պատկերն աղավաղվում է:

ԱԿՆԴԱՅՏ ՇԱՀՎԿԵՏ ԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՍԿԵՏ ԳՆՈՒՄՆԵՐ

Կան հատուկ ոլորտներ, որտեղ պետությունն ունի հստակ և մշտական կարիք, որի բավարարման նպատակով կարճաժամկետ կտրվածքով պարբերաբար կազմակերպվում են գնումներ, մինչդեռ դա կարելի է ավելի հիմնավոր կերպով կազմակերպել, այսինքն` գնում իրականացնել երկարաժամկետ հատվածի համար և մեկ անգամ: Դա հնարավորություն կտա, նախևառաջ, տնտեսել գումարներ և ապահովել անհրաժեշտ որակ:

- Այդ առումով, հարկ է նշել ինսուլինի ձեռքբերման օրինակը, որը թերևս վերջին տարիների գնման լավագույն օրինակներից է, որտեղ պետությունը խնայելով զգալի գումարներ, ստանում է անհրաժեշտ արդյունք, մասնավորապես.

2012 թ. և 2013թ. առաջին կիսամյակում ՀՀ առողջապահության նախարարության կողմից մրցութային կարգով «Նատալի Ֆարմ» և «ՄԼՆ Ֆարմ» ՍՊԸ-ներից ձեռք է

բերվել կարճատև, միջին, կարճատև և միջին ազդեցության տեսակի 224,018 սրվակ ինսուլին (10 մլ = 1 սրվակ)՝ 1,075,286.0 հազ. դրամ արժեքով (մեկ սրվակի արժեքը 4800 դրամ կամ 1մլ՝ 480 դրամ):

Հետագայում սահմանվել է, որ 2013-2019թթ. ինսուլին դեղի գնումներն իրականացվելու են բանակցային ընթացակարգով (առանց մրցույթի), որի արդյունքում 10 մլ 1 սրվակի համար 4800 դրամի փոխարեն վճարվել է 1345 դրամ, կամ 1 մլ 134.5 դրամ:

Ըստ Նախարարության և «Նովո-Նորդիսկ Ա/Ս» ՍՊԸ-ի միջև կնքված ինսուլինի գնման պայմանագրի՝ 2014 թ. նախատեսվում է ձեռք բերել 2.130.000 մլ ինսուլին (1մլ=134.5 դրամ):

Հաշվի առնելով ինսուլինի ձեռքբերման նախորդ տարիների գնի և կնքված պայմանագրերով նախատեսված գնային տարբերությունը՝ Նախարարության կողմից բանակցային ընթացակարգով (առանց մրցույթի) անմիջապես արտադրողից վերոնշյալ ծավալի ուղղակի գնում իրականացնելու շնորհիվ, միայն ինսուլինի մասով 2014 թ. պետական բյուջեի միջոցների խնայողությունը կկազմի շուրջ 736 մլն դրամ ($(480 - 134.5) \times 2.130.000$):

Պետական բյուջեից դեղորայքի ձեռքբերման համար տրամադրվող միջոցները կարող են խնայվել նաև մյուս դեղատեսակների դեպքում:

Այսպիսով.

Գնումների համակարգում տևական ժամանակ առկա մեծ թվով խնդիրներն ու ռիսկերը, ինչպես նաև անարդյունավետ բյուջետային ծախսերը վկայում են, որ համակարգը լիովին չի արդարացնում սպասելիքները, արդյունքում առաջանում են անցանկալի հետևանքներ:

Այդ առումով, Վերահսկիչ պալատը շարունակելու է հետևել համակարգում ընթացող բարեփոխումների ընթացքին: Գնումների ոլորտը, որպես վերահսկողական առաջնահերթություն, մշտապես լինելու է Վերահսկիչ պալատի ուշադրության կենտրոնում:

Միջազգային համագործակցության շրջանակներում Վերահսկիչ պալատը գնումների ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով արդեն ձեռնարկել է որոշակի քայլեր:

2.2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Վերահսկողությունն իրականացվել է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծրագրերի, Հայաստանում դեղերի շրջանառությանն ուղղված գործողությունների, ինչպես նաև «Առողջապահական» ԾԻԳ-ի կողմից իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի նկատմամբ:

Ծրագրի նպատակը պետության կողմից երաշխավորված ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում անվճար բժշկական օգնության և սպասարկման արդյունավետ կազմակերպումն ու կանոնակարգումն է:

Կառավարության 04.03.2004 թ. N 318-Ն որոշման N 1 հավելվածով սահմանվել են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում

ստանալու իրավունք ունեցող բնակչության թվով 21 սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբեր:

Ընտրանքային կարգով ուսումնասիրվել են 2012 թվականին ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված՝ **36.00 և ավելի միավոր** ունեցող անձանց խմբին (*հատուկ խմբից որպես առավել ռիսկային ընտրանք*) մատուցած, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները:

2013 թ. ծրագիրը չի ուսումնասիրվել՝ «Ընտանեկան նպաստ» համակարգի ամբողջական բազայի բացակայության, դրա տվյալների և ծրագրի ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվության համադրման անհնարինության պատճառով:

36.00 ԵՎ ԱՎԵԼԻ ՄԻԱՎՈՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության տվյալներով 2012 թվականին 36.00 և ավելի միավոր ունեցող անձանց տրամադրվել է թվով 2567 ծառայություն՝ շուրջ 330,000.0 հազ. դրամ ծավալով:

Ընտրանքային սկզբունքով ստուգվել է 6 բժշկական հաստատություն, 164,000.0 հազ. դրամ ստուգման ծավալով: Արձանագրվել է խախտման 72 դեպք՝ 25,039,75 հազ. դրամի չափով: Խախտումների վիճակագրական պատկերը հետևյալն է.

Անվանումը	Խախտման բնույթը	Դեպք
«Արմենիա» ԲԿ	ՍԾՏԳ ² -ի կողմից տրվել է իրականից բարձր անապահովության միավորի վերաբերյալ տեղեկանք	7
	Տեղեկանքը հավաստի չէ կամ տրվել է այլ անձի անունով	3
	Անվճար բուժում է ստացել նպաստառու չհանդիսացող կամ ցածր միավոր ներկայացրած անձը	5
	Տեղեկանք չի ներկայացվել	1
«Նորք-Մարաշ» ԲԿ	ՍԾՏԳ-ի կողմից տրվել է իրականից բարձր անապահովության միավորի վերաբերյալ տեղեկանք	2
	Տեղեկանքը տրվել է նպաստառու չհանդիսացող անձին	4
	Տեղեկանքը հավաստի չէ կամ տրվել է այլ անձի անունով	2
	Բուժումից առաջ անձը հաշվառվել է նպաստառու ընտանիքի հասցեում՝ տեղեկանք ստանալու նպատակով	4
Հրազդանի ԲԿ	ՍԾՏԳ-ի կողմից տրվել է իրականից բարձր անապահովության միավորի վերաբերյալ տեղեկանք	12
	Տեղեկանքը տրվել է նպաստառու չհանդիսացող անձին	3
	Տեղեկանքում անապահովության միավորը կեղծվել է	1
	Հայտնաբերվել են Հրազդանի ՍԾՏԳ-ի պետի ստորագրությունը կեղծելու դեպքեր	8
Վանաձորի ԲԿ	ՍԾՏԳ-ի կողմից տրվել է իրականից բարձր անապահովության միավորի վերաբերյալ տեղեկանք	4
	Տեղեկանքը տրվել է նպաստառու չհանդիսացող անձին	2
	Տեղեկանքը հավաստի չէ կամ տրվել է այլ անձի անունով	7

² ՍԾՏԳ - Սոցիալական ծառայության տարածքային գրասենյակ

Անվանումը	Խախտման բնույթը	Դեպք
	Բուժումից առաջ անձը հաշվառվել է նպաստառու ընտանիքի հասցեում՝ տեղեկանք ստանալու նպատակով	1
Սպիտակի ԲԿ	Տեղեկանքը հավաստի չէ կամ տրվել է այլ անձի անունով	6
Ա. Վ. Մալայանի անվ. Գ.Ա. կենտրոն	ՍԾՏԳ-ի կողմից տրվել է իրականից բարձր անապահովության միավորի վերաբերյալ տեղեկանք	2
	Տեղեկանքը տրվել է այլ անձի անունով	1
	Տեղեկանքը տրվել է նպաստառու չհանդիսացող անձին	2
	Անձը բարձր միավորով տեղեկանք ստանալու նպատակով փոխել է կենսաթոշակի տեսակը	1

Խախտումների հիմնական պատճառը ՍԾՏԳ-ների կողմից առողջապահական հաստատություններին անարժանահավատ տեղեկանքների տրամադրումն է: Արդյունքում, պետական բյուջեի որոշ միջոցներ օգտագործվել են ոչ նպատակային և ոչ հասցեական:

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2012 թ. ծրագրով պետական բյուջեի ծախսը կազմել է 1,268,155.8 հազ. դրամ, 2013 թ.՝ 1,249,915.0 հազ. դրամ:

Ընտրանքային սկզբունքով ստուգվել է «ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր» ՓԲԸ-ն: Ստուգման ծավալը 2012 թվականին կազմել է 793,408.0 հազ. դրամ, 01.09.2013թ. դրությամբ 526,301.0 հազ. դրամ:

- **Բնակչությանը մատուցված ծառայություններ**

Ստուգմամբ պարզվել է, որ ծառայությունների մատուցման հիմքում դրված ոչ հիմնավոր հաշվարկներով հիվանդների թվի և նրանց բուժման ու հետազոտման ժամկետների վերաբերյալ ներկայացվել են ոչ հավաստի տվյալներ: Արդյունքում, որոշ դեպքերում ծառայությունն իրական շահառուներին մատուցվել է մասնակի:

Օրինակ՝

- քաղաքացի Ա.Վ.-ն³, ըստ ձևակերպված փաստաթղթերի, 151 օր ստացիոնար բուժում է ստացել, որի դիմաց Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսերի ֆինանսավորումը կազմել է 1,281.6 հազ. դրամ, սակայն հիվանդի ներկայացրած հայտարարությամբ նա Դիսպանսերում ստացիոնար պայմաններում բուժվել է ընդամենը 7 օր, որից հետո, մինչև 2012 թ. դեկտեմբեր ամիսը ստացել է իրեն հասանելիք դեղերը, սակայն ստացիոնար պայմաններում չի բուժվել: Հայտարարության իսկությունը հաստատվել է նաև հիվանդի աշխատանքի վայրից

³ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված գաղտնիության սկզբունքով չի հրապարակվում հիվանդի մասին անձնական տվյալներ:

ստացված տեղեկանքով, որում նշված է տվյալ անձի աշխատանքի կանոնավոր հաճախումների և անաշխատունակության թերթիկ չներկայացնելու հանգամանքը:

- քաղաքացի Դ.Ղ.-ի ստացիոնար հետազոտության ժամկետն, ըստ ձևակերպված փաստաթղթերի, կազմել է 24 օր, սակայն հիվանդի մոր հայտարարության համաձայն՝ նա անցել է հետազոտություն, բայց ոչ ստացիոնար պայմաններում:

Վերահսկիչ պալատի վերահսկողության ընթացքում ի հայտ են եկել նմանատիպ շուրջ 20 դեպք, որոնց գծով ծախսվել է 4,859.4 հազ. դրամ: Այսինքն՝ փաստացի չնատուցված ծառայության դիմաց կատարվել է վճարում: Գումարը ենթակա է վերականգնման պետական բյուջե:

Ստորև պատկերված աղյուսակում ներկայացված են նշված խախտման մի քանի օրինակներ.

Անուն, Ազգանուն	Ձևակերպված օրերի թիվը	Փաստացի ստաց. բուժում ստացած կամ հետազոտված օրերի թիվը	Գումարային տարբերությունը (հազ. դրամ)	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
Ռ. Վ.	61	7	480.6	Հայտարարել է, որ Դիսպանսերում ստացիոնար բուժում ստացել է ընդամենը 7 օր, Դիսպանսերից ստացել է իրեն հասանելիք դեղերը և բուժվել է տանը:
Յ. Ա.	33	0	293.7	Հայտարարել է, որ Դիսպանսերում ստացիոնար չի բուժվել, ստացել է իրեն հասանելիք դեղերը և բուժվել է տանը
Ն. Ն.	50	5	400.5	Հայտարարել է, որ Դիսպանսերում ստացիոնար բուժում ստացել է միայն 5 օր, այցելել է Դիսպանսեր միայն հետազոտվելու և իրեն հասանելիք դեղերը ստանալու համար
Ս. Յ.	8	0	71.2	Մայրը հայտարարել է, որ անցել են հետազոտություններ, սակայն ստացիոնար բուժում չի ստացել Դիսպանսերում
Յ. Յ.	8	0	71.2	Հայրը հայտարարել է, որ անցել են հետազոտություններ, սակայն ստացիոնար բուժում չի ստացել Դիսպանսերում
Ե. Ս.	8	0	71.2	Մայրը հայտարարել է, որ այցելել են մեկ անգամ անալիզ հանձնելու, սակայն երեխան ստացիոնար բուժում չի ստացել Դիսպանսերում

Բացի այդ, հիվանդանոցային պայմաններում տուբերկուլոզի ախտորոշման նպատակով սահմանված օրական 7150 դրամի փոխարեն փոխանցվել է 8900 դրամ: Արդյունքում, 2012թ. (16868 մարդ/օր) և 2013թ. (16056 մարդ/օր) բժշկական հաստատությունների ավելի է վճարվել համապատասխանաբար՝ 24,762.2 և 24,954.6 հազ. դրամ:

• **Գնումների գործընթաց**

Գնումների գործընթացում Դիսպանսերի կողմից թույլ են տրվել գնումների մասին օրենսդրության բազմաթիվ խախտումներ: Հատկապես կարելի է առանձնացնել ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N168-Ն որոշման 35.1 կետի պահանջի խախտման դեպքը, ըստ որի, գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով վիճակագրական տվյալները և նմանատիպ գործունեություն իրականացնող կազմակերպությունների գնային առաջարկները, պետք է կատարեր շուկայական գների ուսումնասիրություն, որը չի կատարվել: Արդյունքում, 2012 թ. ձեռք բերված ապրանքների գները գերազանցել են դրանց միջին շուկայական ցուցանիշների մակարդակը:

Օրինակ` 2012 թ. մակարոնեղենը գնվել է 630 դրամով` 350 դրամի⁴ փոխարեն, շաքարավազը 595 դրամով` 410 դրամի փոխարեն, սպիտակաձավարը 594 դրամով` 350 դրամի փոխարեն, բրինձը 604 դրամով` 400 դրամի փոխարեն, ձուն 60 դրամով` 50 դրամի փոխարեն, տավարի միսը 3240 դրամով` 2300 դրամի փոխարեն և այլն: Բացի այդ, Կանոնակարգված չէ նաև հիվանդներին տրամադրվող սննդի չափաքանակներին, էներգետիկ արժեքին և սննդակարգին վերաբերող հարցերը:

Դիսպանսերում սննդի էներգետիկ արժեքը որոշվում է խորհրդային տարիների նորմատիվների հիման վրա:

Հիվանդների շարժի` ընդունելության և դուրս գրման ցուցանիշների ընտրանքային ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ 2013 թ. հունվար-օգոստոս ամիսներին Դիսպանսերում հաշվառված հիվանդների և ճաշացանկ-պահանջագրերում արտա-ցրված սնվողների թվերի միջև առկա են զգալի տարբերություններ:

Ակնհայտ է, որ ֆինանսավորման նպատակով ներկայացվող հաշվետվություններում հիվանդների թվին վերաբերող տվյալների ներկայացման գործընթացը ռիսկային է:

Դիսպանսերի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ ներկայացված ստուգման արդյունքներն ամբողջական չեն, քանի որ ստուգման ընթացքում` 12.09.2013 թ., ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության կողմից հարուցված քրեական գործի շրջանականերում առգրավվել են Դիսպանսերի 2009-2012 թթ. ֆինանսական և հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, որի պատճառով 01.10.2013 թ. Վերահսկիչ պալատի կողմից իրականացվող ստուգման գործընթացը կասեցվել է:

Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ծրագիրը ֆինանսավորվում է ոչ միայն պետական բյուջեի, այլ նաև` Գլոբալ հիմնադրամի միջոցներից: Մասնավորապես.

հազ. դրամ

	ՀՀ պետական բյուջե	Գլոբալ հիմնադրամ	Ընդհանուր
2009թ.	1,268,155.8	199,092,987	200,361,142.8
2010թ.	1,170,715.0	323,709,192	324,879,907
2011թ.	1,298,058.0	262,566,019	263,864,077
2012թ.	1,304,956.0	1,017,346.0	2,322,302
2013թ.	1,313,319.3	1,260,980.8	2,574,300.1

Ինչ վերաբերում է տուբերկուլոզի հիվանդության և մահացածության ցուցանիշներին, ապա պետք է նշել, որ վերջին տարիներին դրանք էականորեն նվազում են: Այնուամենայնիվ, դրան համարժեք ֆինանսավորման հոսքերը չեն փոփոխվում, դեռ ավելին, դրանք գնալով ավելանում են: Կարելի է ենթադրել, որ ֆինանսավորումը համարժեքորեն չի արտացոլում առկա վիճակն ու միտումները: Ֆինանսավորման

⁴ Գների վերաբերյալ տեղեկության հիմք` ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալներ:

ուղղությունները տարիներ շարունակ հիմնականում չեն փոփոխվում, չեն արտացոլում տեղի ունեցող զարգացումները:

Նման հակասական վիճակագրությունը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ տուբերկուլյոզային հիվանդանոցները փոխհատուցվում են ըստ մահճակալ/օրերի ծանրաբեռնվածության մեթոդի, ինչը հանգեցնում է տուբերկուլյոզով հիվանդներին հիվանդանոցում անհարկի երկար պահելուն: Բացի այդ, այդ երևույթն իր հերթին կարող է նպաստել ներհիվանդանոցային դեղակայուն տուբերկուլյոզի վարակի տարածմանը:

Հանրային առողջության պահպանման տեսանկյունից կարևոր քայլ կլինի փոխել տուբերկուլյոզային հիվանդանոցային ծառայությունների ֆինանսավորման մեխանիզմը՝ անցնելով կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման:

Ստուգվել են նաև Գլոբալ հիմնադրամի ֆինանսավորմամբ սարքերի և սարքավորումների ձեռք բերման գործարքները:

Հիմնադրամի աջակցությամբ ձեռք բերված 294,550.0 հազ. դրամի սարքավորումները տարբեր պատճառներով վերահսկողության ավարտի դրությամբ դեռևս չէին օգտագործվում (շահագործվում): Մասնավորապես.

Սարքավորման անվանումը	Ընդունում	Հանձնում	Արժեքը (հազ. դրամ)	Սարքավորման շահագործումը 21.11.2013թ. դրությամբ
Փենետիկական անալիզատոր (ABI PRISM 3500)	20/12/12	11/01/13	120,000.0	Չի շահագործվում
Ռենտգեն ախտորոշման բազմաֆունկցիոնալ հեռակառավարվող ունիվերսալ համալիր (Siemens Luminos RF)	08/08.12	08/08.12	74,200.0	Չի շահագործվում
Ռենտգեն ախտորոշման բազմաֆունկցիոնալ հեռակառավարվող ունիվերսալ սարք (Siemens Luminos RF)	09/08/12	01/08/13	74,200.0	տեղադրված չի և չի շահագործվում
ԴՆԹ և ՌՆԹ անջատող և բջիջներ առանձնացնող ավ-տոմատ սարք (NorDiag Arrow)	05/09/12	05/11/12	13,837.0	Չի շահագործվում
Կենսաքիմիական ավտոմատ վերլուծիչ (HumaStar 150SR)	04/12/12	17/12/12	12.313.0	Չի շահագործվում
Ընդամենը				294,550.0

• Առողջապահական ԾԻԳ-ի կողմից ձեռք բերված 636,403.5 հազ. դրամի չափով սարքավորումներից 112,452.8 հազ. դրամի չափով սարքավորում ստուգման պահի դրությամբ բաշխված չէր բժշկական հաստատություններին և չէր շահագործվում:

Ակնհայտ է, որ ծախսված միջոցների արդյունավետությունը եղել է ցածր: Դրա հիմնական պատճառը սխալ և ոչ պատշաճ պլանավորումն է:

ՀԵՄՈՂԻԱԼԻՁԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս ծրագրում նույնպես արձանագրվել են խախտումներ և թերություններ: Սակայն, առավել ուշագրավ է հեմոդիալիզի ծառայությունների մատուցման ժամանակ բժշկական հաստատությունների կողմից հեմոդիալիզատորների /ֆիլտր/ բազմակի օգտագործման դեպքերը:

Տվյալ դեպքում, թեև, ՀՀ առողջապահության նախարարի հրամանով մեկ սեանսի ընթացքում ֆիլտրի բազմակի օգտագործումն, **առողջական անվտանգությունից ելնելով, արգելված է, և ֆինանսավորումը կատարվել է «մեկ սեանսի համար մեկ ֆիլտր» սկզբունքով, այնուամենայնիվ, բժշկական հաստատությունները փաստացի գնելով ավելի քիչ ֆիլտրներ, դրանք օգտագործել են բազմակի:**

Ուշագրավ է նաև այն, որ բժշկական հաստատությունների ձեռք բերած ֆիլտրների վերջնական գները մի քանի անգամ գերազանցում են դրանց ներմուծման հաշիվ-ապրանքագրերում նշված արժեքը:

Միայն հեմոդիալիզատորների բազմակի օգտագործման հետևանքով հաշվետու ժամանակաշրջանում «Վանաձորի բժշկական կենտրոն» և «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ների դեպքում ոչ նպատակային ծախսը կազմել է համապատասխանաբար՝ 23,586.0 և 20,874.0 հազ. դրամ:

ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

«Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագրի շրջանակներում 2013 թվականի համար ծախսվել է 2,329,200.0 հազ. դրամ:

Ընտրանքային ստուգմամբ պարզվել է.

- Եթե Գլիկլազիդ (հնդկական արտադրության Դիազոն ՄՌ 60 մգ) և Գլիմեպիրիդ (հնդկական արտադրության Դիամառ Մ) տեսակի դեղերը գնվելին բանակցային ընթացակարգով (առանց մրցույթի, ինչպես ինսուլինի ձեռք բերման պարագայում), ապա այդ դեպքում կարելի էր խնայել ավելի քան 200.0 մլն դրամ:
- 2012թ. միայն երկու տեսակի դեղերի 2013թ. գներով ձեռք բերելու դեպքում կտնտեսվեր ավելի քան 55.0 մլն դրամ:
- Եթե 2012թ. գնվում էր եվրոպական արտադրության որևէ դեղամիջոց, իսկ այժմ գնվում է նույնի ասիական /հնդկական/ տարբերակը, և արդյունքում որոշ գումարներ խնայվում են, ապա հստակ հիմնավորված չէ տվյալ դեղորայքի էֆեկտիվության ապահովման խնդիրը:

Գնումների իրականացման նպատակով պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և ՀՀ-ում դեղերի շրջանառությանն ուղղված գործողությունների և ընթացակարգերի ուսումնասիրությունները շարունակվելու են նաև 2014 թվականին: Այդ առումով, օտարերկրյա գործընկերների աջակցությամբ առավել ռիսկային դեղերի անկախ փորձաքննություն անցկացնելու և որոշ դեղերի որակը ստուգելու ուղղությամբ վերահսկիչ պալատը ներկայումս քայլեր է ձեռնարկում:

2.3. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ

Հաշվետու տարում վերահսկողություն է իրականացվել նաև ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգում:

Վերահսկողությամբ պարզվել է.

Սպասարկման որակի բարձրացման, գործառույթների իրականացման թափանցիկության և վերահսկելիության մակարդակի բարձրացման, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման առկա ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով Կոմիտեի համակարգում տևական ժամանակ իրականացվում են բարեփոխումներ:

Ընտրանքային կարգով ստուգվել են միայն «Երևան» տարածքային ստորաբաժանման կողմից կատարված գործարքները և հայտնաբերվել են մի շարք խախտումներ:

1. «Երևան» տարածքային ստորաբաժանման կողմից իրականացված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների գրանցումների և գրանցման վարույթի կասեցման 5750 գործից ընտրանքային կարգով ստուգվել է 180 գործ, որից խախտումներ են արձանագրվել 40-ում կամ ստուգվածի 22,2%: Դրանցից կարելի է առանձնացնել հետևյալ դեպքերը.

ա/ Գրանցման դիմումին հաջորդում են մի շարք կասեցումներ և իրավունքը գրանցում է ստանում ընդհուպ մինչև 10 ամիս հետո, բայց այլ գույքի նկատմամբ, օրինակ՝

- ք. Երևան Դավթաշեն 4-րդ թաղ. 5/5 հասցեի 53.7քմ ընդհանուր մակերեսով հողամասում առկա 2010թ.-ին ինքնակամ կառուցված 7.98քմ կիսակառույց հասարակական շինության նկատմամբ իրավունքի պետական գրանցման համար դիմումի վարույթը 01.11.2012թ. կասեցվել է հետևյալ հիմնավորմամբ՝ հողամասի վրա պատկերված 7.98 քմ մակերեսով կիսակառույց /50-80% ավարտվածության աստիճանով/ շինություն առկա չէ: Այնուհետև, նույն հասցեում պետական գրանցում է ստացել 2013թ.-ին ինքնակամ կառուցված մինչև 50% ավարտվածության աստիճանով 5.0քմ կիսակառույց մեկ այլ շինություն:

Վերոնշյալ անշարժ գույքի նկատմամբ չէր կարող իրականացվել պետական գրանցում, քանի որ Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումը վերաբերվում է 2010թ. կառուցված 50-80% ավարտվածության աստիճանով 7.98քմ կիսակառույց հասարակական շինությանը, սակայն պետական գրանցում է ստացել մեկ այլ շինություն:

բ/ Գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման միանման գործերի համար ներկայացված փաստաթղթերը ստացել են տարբեր զնահատականներ, կիրառվել է երկակի մոտեցում:

Եթե մի դեպքում ստորաբաժանում ներկայացված փաստաթղթերն ընդունվել են որպես հիմք և կատարվել է պետական գրանցում, ապա մեկ այլ դեպքում՝ նույն տարածքում գույքի պետական գրանցումը կասեցվել է:

Օրինակ՝

- Թբիլիսյան խճուղի 21/11 հասցեի համար 23.03.2012թ. ներկայացվել է դիմում, որին կից փաստաթղթերում նշված 641.64քմ ընդհանուր մակերեսով հողամասում առկա է ինքնակամ կառուցված 21.2քմ կիսակառույց բնակելի տուն, 17.92քմ

թիւերը օժանդակ շինություն և 11.4քմ պարիսպ, սակայն առքուվաճառքի պայմանագրում նշված է միայն բնակելի տունը, օժանդակ շինությունը և ներկայացվել են դրանց համար նախատեսված վճարման անդորրագրերը:

Բնակելի տունը չի համապատասխանում ՀՀ քաղաքաշինության նախարարի և ՀՀ ԱԳ պետական միասնական կադաստրի վարչության պետի 26.05.1998թ. թիվ 108-Կ համատեղ հրամանի պահանջներին և ներկայացված փաստաթղթերում կան անհամապատասխանություններ:

Հաշվի չառնելով այդ փաստերը 27.03.2012թ. կատարվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում, որում բացակայում է ինքնական կառուցված պարիսպը: Մինչդեռ, վարույթը պետք է կասեցվեր «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի պահանջների համաձայն և վերոնշյալ վարչարարությանը խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջները:

- Աճառյան փողոց 43/24 հասցեի նկատմամբ պետական գրանցման համար դիմումին կից ներկայացվել են «Ինքնական կառույցն օրինականացնելու մասին» Երևանի քաղաքապետի 05.10.2011թ. 4629-Ա որոշումը և կցված հողամասի, շինության հատակագծերն ու շինության բնութագիրը: Փաստաթղթերում նշված 1111.92քմ ընդհանուր մակերեսով հողամասում առկա է 2009թ.-ին ինքնական կառուցված 9.4քմ կիսակառույց բնակելի տուն և 12.5քմ լողավազան: 26.10.2012թ.-ին դիմումի վարույթը կասեցվել է՝ «ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջների համաձայն անհրաժեշտ է ներկայացնել կիսակառույցն ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանքը, շինության նախագիծը, շինարարության թույլտվությունը և շինարարության շահագործման փաստագրման ակտը» հիմքով:

Վարույթի կասեցումը իրականացվել է սխալ հիմքով, քանի որ ՀՀ կառավարության 18.05.06թ. 912-Ն որոշման 4-րդ կետում նշված են բացարձակ այլ դրույթներ, իսկ վերը նշված փաստաթղթերը ներկայացնելու պահանջը հիմնազուրկ է:

Այնուհետև, առանց վարույթի կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալու (թվով 5 տարաբովանդակ կասեցումներից հետո) 11.06.2013թ. կատարվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում, որով խախտվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասի պահանջը:

զ/ Որոշ դեպքերում սեփականատերերի կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա սահմանված կարգով իրավունքների պետական գրանցում չի կատարվել, այլ անհիմն կասեցվել է, որից հետո առանց որևէ լրացուցիչ փաստաթուղթ ի հայտ գալու նույն տարածքի նկատմամբ կատարվել է իրավունքի պետական գրանցում:

Օրինակ՝

- Աղաբաբյան փողոց 19/2 հասցեի նկատմամբ պետական գրանցման համար 07.08.2012թ. ներկայացվել է դիմում, որի վարույթը 10.08.2012թ. կասեցվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի սահմանած հիմքով՝ «Տվյալ գույքը չի համապատասխանում ՀՀ քաղաքաշինության նախարարի և ՀՀ ԱԳ պետական միասնական կադաստրի վարչության պետի

26.05.1998թ. թիվ 108-Կ համատեղ հրամանի, բնակելի շինությանը վերաբերվող պահանջներին»: Առանց վարույթի կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալու, 21 օր հետո՝ 31.08.2012թ. կատարվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում, որով խախտվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

դ/ Մի շարք դեպքերում գրանցված հողամասերի գործառնական նշանակությունը չի համապատասխանել տրամադրված հողամասի նպատակային նշանակության:

Բազմաթիվ դեպքերում օգտագործվող շենք/շինությունների օգտագործման նպատակային նշանակությունը չի համապատասխանել տրամադրված հողամասերի նպատակային և գործառնական նշանակությանը, ինչը հակասում է ՀՀ «Հողային օրենսգրքի» 10-րդ հոդվածի պահանջներին: Օրինակ՝

- Դավթաշեն 1-ին թաղ. 36/4 հասցեում գրանցված է անհատի սեփականության իրավունքը: Ըստ գրանցման տվյալների 998.13 քմ հողամասը համատեղ սեփականություն է: Գրանցման տվյալներով հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրի, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական: Շինության նպատակային նշանակությունը՝ արտադրական, շինության օգտագործման նպատակը՝ արտադրամաս և խանութ-արտադրամաս: Երևանի քաղաքապետի 1041-Ա 19.04.2013թ. որոշմամբ անհատներին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 905.0 քմ ուղղակի վաճառքի միջոցով օտարվել է լրացուցիչ 93.13 քմ հողամաս:

Գրանցված հողամասի գործառնական նշանակություն՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակություն գոյություն չունի: Շինության նպատակային նշանակությունը՝ արտադրական, հակասում է հողամասի նպատակային նշանակությանը, իրականում շինությունները պետք է գրանցված լինեին որպես հասարակական, քանի որ տվյալ օբյեկտը ծառայում է որպես լողավազան: Երևանի քաղաքապետի որոշմամբ լրացուցիչ տրամադրված 93.13քմ տարածքը տրամադրման ժամանակ ծանրաբեռնված է եղել ինքնակամ կառուցված շինությունով, որն անտեսվել է: Նշված օբյեկտի շինությունների իրական տվյալները չեն համապատասխանում գրանցման տվյալներին, գրանցման ժամանակ առկա են եղել ինքնակամ կառուցված այլ տարածքներ, որոնք չեն չափագրվել:

ե/ Մի շարք նախագծային ինստիտուտների շենք-շինությունների օգտագործվող հողամասերի նպատակային նշանակությունը գրանցված է որպես բնակավայր, իսկ շինություններինը՝ արտադրական, մինչդեռ դրանք փաստացի օգտագործվում են որպես հասարակական նշանակության: Երևույթը պայմանավորված է նրանով, որ հասարակական նշանակության դեպքում գույքահարկի գործակիցը զգալի մեծ է: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ առանց համապատասխան լիազորությամբ օժտված լինելու, Կոմիտեի ստորաբաժանման կողմից կատարվել է հողի նպատակային նշանակության նշագրման փոփոխություն, որը բերել է հողային ֆոնդի և գույքահարկի բազայի մասնակի անճշտության: Օրինակ՝

- Չարենցի 1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ 24.10.2004թ.-ից գրանցված է նախագծային ՓԲ ընկերության սեփականության իրավունքը: 6008 քմ հողամասի նպատակային նշանակությունը գրանցվել է որպես բնակավայրերի, իսկ

գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մինչդեռ գրանցման ժամանակ 10804.6 քմ շենքի նպատակային նշանակությունը եղել է հասարակական, իսկ օգտագործման նպատակը՝ հասարակական:

Առանց համապատասխան լիազորության ՀՀ ԿԱԱԳԿՊԿ կողմից կատարվել է «ուղղում» վկայականում, ըստ որի շենքի նպատակային նշանակությունը նշվել է արտադրական, օգտագործման նպատակը՝ գիտահետազոտական ինստիտուտ: 09.09.2013թ. դրությամբ 16 վարձակալների վարձակալության է տրամադրված ընդհանուր մակերեսով 2443.4 քմ տարածք:

Գրանցված շինությունների արտադրական նպատակային նշանակությունը չի համապատասխանում հողամասի բնակավայրերի նպատակային նշանակությանը: Արդյունքում, շինությունների ընդհանուր կադաստրային գնահատված արժեքը կազմել է 322,444.1 հազ. դրամ, սակայն պետք է գնահատվեր որպես հասարակական տարածք, որի դեպքում գնահատված կադաստրային արժեքն առնվազն 5 անգամ ավելի կկազմեր: Վարձակալության տրամադրված տարածքները, թեև օգտագործվում են հասարակական նշանակությամբ, նույնպես գնահատվել են որպես արտադրական տարածքներ:

գ/ Շինությունների կադաստրային գնահատման աշխատանքների մի մասն իրականացվել է սխալներով և թերություններով, արդյունքում պակաս են հաշվարկվել շենք-շինությունների կադաստրային գնահատված արժեքները: Օրինակ.

- Մաշտոցի պողոտա 33/2 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի (7142,9քմ) նկատմամբ 13.09.2012թ. գրանցված է անհատի սեփականության իրավունքը: Գրանցման գործընթացը կատարվել է խախտումներով, շենքի փաստացի չափագրված և գրանցված տվյալները չեն համապատասխանում շինարարության նախագծին, մասնավորապես 1-ին հարկում առկա է նախագծային շեղում, շենքի գլխավոր մուտքի ամբողջ տարածքը ինքնական կառույցով փակվել է, իսկ շենքի մուտքը երկրորդական մուտքից է կատարվում: Սխալ է կատարվել նաև բազմաբնակարան բնակելի շենքի կադաստրային գնահատումը, այն գնահատվել է անհատական բնակելի տան գնահատման կարգով և գնահատված արժեքը կազմել է 709,630.3 հազ. դրամ, բազմաբնակարան շենքի գնահատման կարգով գնահատելու դեպքում այն կկազմի շուրջ 1,460.0 մլն. դրամ:

2. ՀՀ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության պետի և ՀՀ քաղաքաշինության նախարարի 26.05.1998թ. 108-Կ համատեղ հրամանով հաստատված «ՀՀ տարածքում ըստ նպատակային նշանակության շենքերի և շինությունների դասակարգման» կարգի 3-րդ կետը (սահմանված է բազմաֆունկցիոնալ շենք/շինությունների համար նաև արտադրական նպատակային նշանակություն) հակասում է ՀՀ «Հողային օրենսգրքի» 10-րդ հոդվածի դրույթներին, ըստ որի բնակավայրի նպատակային նշանակության հողերում նախատեսվում է միայն բնակելի և հասարակական նշանակության համադրությամբ օգտագործվող շենքեր:

Վերահսկիչ պալատի կողմից Կոմիտեին առաջարկվել է քննարկել ՀՀ «Հողային օրենսգրքին» համապատասխան «ՀՀ տարածքում ըստ նպատակային նշանակության շենքերի և շինությունների դասակարգման» նոր կարգի մշակման հարցը:

3. «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է ՀՀ և Վրաստանի Հանրապետության միջև սահմանային տեղագրական քարտեզների ճշգրտման, թարմացման, անճշտությունների վերացման և տեղագրագեոդեզիական աշխատանքներ՝ 15,523.5 հազ. դրամ արժեքով:

Սակայն, ստուգմամբ պարզվեց, որ քարտեզների համադրման, վերջնական ստուգման և ընդունման աշխատանքներն ամբողջությամբ ավարտված չէին: Քարտեզներում ճանաչման կետերի կոորդինատների և բարձրությունների որոշման հարցերի շուրջ կողմերի միջև տարաձայնությունները տևական ժամանակ մնում են չլուծված:

Տվյալ ոլորտում իրականացված վերահսկողության ընթացքում արձանագրված խախտումները, թերություններն ու խնդիրներն առավել մանրամասն նկարագրված են Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվությունում:

2.4. ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏ

Հաշվետու տարում վերահսկողությունն իրականացվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության «Բարձրավոլտ էլեկտրազանցեր», «Երևանի ՋԷԿ», «Հայաստանի ատոմային էլեկտրակայան», «Որոտան ՀԷԿ», «Էներգակարգաբերում», «Անալիտիկ», «Հաշվարկային կենտրոն» ՓԲ ընկերությունների կողմից շահաբաժինների հաշվարկման և վճարման գործընթացի նկատմամբ:

Վերահսկողությամբ պարզվել է.

1. Ընկերությունների տարեկան ֆինանսատնտեսական գործունեությունն արտահայտող ցուցանիշները վկայում են դրանց ոչ համաչափ զարգացման մասին:

2. Ընթացիկ կառավարման և պլանավորման փուլերում իրականացվող աշխատանքները բավարար չեն:

3. Համակարգի ընկերությունների ոչ շահութաբեր գործունեության իրողությունը՝ ընկերությունների գերակշիռ մասը ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում վնաս է արձանագրել:

4. Համակարգի ընկերությունների կողմից կարճաժամկետ (ընթացիկ) և երկարաժամկետ պարտավորությունների ոչ լիարժեք կատարումը նույնպես նպաստում է վնասաբերությանը:

5. Հաշվապահական հաշվառումը ոչ պատշաճ վարելու, ֆինանսական հաշվետվությունները թերի կազմելու արդյունքում ոչ ճիշտ արտացոլված (նվազեցված) ԱԱՀ-ի և շահութահարկի ներկայացման հետևանքով, միայն 2012 թվականի ընթացքում որոշ ընկերությունների մոտ առաջացել են լրացուցիչ հարկային պարտավորություններ՝ 60,676.3 հազ. դրամի չափով, որը նույնպես նպաստում է վնասաբերությանը: **Վերահսկողության ընթացքում նշված գումարը վճարվել է պետական բյուջե:**

6. Պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների կողմից վճարվող շահութաբաժինների ուսումնասիրությամբ պարզվեց, որ վնասաբերության պատճառով, հաշվետու ժամանակաշրջանում միայն «Էներգակարգաբերում», «Հաշվարկային կենտրոն» և «Անալիտիկ» ՓԲ ընկերությունների մոտ է առաջացել վճարման ենթակա շահութաբաժիններ, որոնք համապատասխանաբար կազմել են

3,122.5 հազ. դրամ 1,755.0 հազ. դրամ և 4,525.0 հազ. դրամ: Գումարները սահմանված կարգով վճարվել են պետական բյուջե:

Վերահսկողությամբ բացահայտված խնդիրների մանրամասն նկարագրությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվությունում:

2.5. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Ստուգվել է սննդամթերքի, հանդերձանքի, դեղորայքի և հացաթխման ծառայության գնման 162 պայմանագիր՝ 13,405,981.7 հազ. դրամ ընդհանուր արժեքով:

1. Գնման 145 պայմանագրեր՝ 10,948,017.2 հազ. դրամ արժեքով (ծեռք բերված ապրանքների գումարի 81%-ը), կնքվել են տեղական արտադրողների կամ ապրանքներն անմիջապես ներմուծողների հետ, և այդ պայմանագրերի միավորի գները ցածր են շուկայական մեծածախ գներից: Խախտումներ չկան:

2. Գնման 17 պայմանագրեր՝ 2,457,964.5 հազ. դրամ արժեքով, կնքվել են կազմակերպությունների հետ, որոնք չեն հանդիսացել արտադրող կամ ներմուծող: Դրանց փոխարեն տեղական արտադրողներից կամ անմիջապես ներմուծողներից գնում կատարելու դեպքում կարելի էր տնտեսել 172,877.3 հազ. դրամ:

3. Գնումների պլանի առանձին անվանատողերով գնման պահանջը հիմնավոր չէր, և վերահսկողության արդյունքում Նախարարությունը 126,050.0 հազ. դրամ ալյուրի, 151,600.0 հազ. դրամ հաշվապահական ծրագրի և 71,677.0 հազ. դրամ պատվաստանյութերի գնման համար հատկացված միջոցները վերաբաշխել է այլ ծախսային հոդվածների:

2.6. ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Պետական բյուջեի «Հասարակական կարգի պահպանության ապահովում» և «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր, պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագրերով ապրանքների ծեռք բերման համար Ոստիկանության 2013 թվականի գնումների պլանով նախատեսվել է 2,723,914.5 հազ. դրամ, որից էլեկտրաէներգիայի, գազի և ջրի գնման համար 696,210.5 հազ. դրամը վճարվում է հաշվիչների փաստացի ցուցմունքների հիման վրա և նվազ ռիսկային է:

Ոստիկանությունը վառելիք, քսայուղեր, անվադողեր, մարտկոցներ և ավտոպահեստամասեր գնելու համար կնքվել է 9 պայմանագրեր՝ 1,330,696.7 հազ. դրամ արժեքով: Պայմանագրերը կնքվել են այդ ապրանքներն անմիջապես ներմուծողների հետ:

Հանդերձանք գնելու համար կնքվել է 10 պայմանագրեր՝ 453,010.2 հազ. դրամ արժեքով: Պայմանագրերը կնքվել են տեղական արտադրողների հետ:

Դեղորայք գնելու համար կնքվել է 26 պայմանագրեր՝ 55,721.4 հազ. դրամ արժեքով: Պայմանագրերը կնքվել են տեղական արտադրողների կամ դեղորայքն անմիջապես ներմուծողների հետ:

Դիտարկումը ցույց է տվել, որ տեղական արտադրողներից կամ անմիջապես ներմուծողներից գնում կատարելու արդյունքում չեն առաջանում ապրանքը թանկացնող առևտրային հավելուրդներ և ապրանքների ձեռք բերման գները չեն գերազանցել շուկայում առկա վաճառքի մեծածախ գները: Գնման գործընթացն իրականացվել է արդյունավետ, և Վերահսկիչ պալատը կնքված պայմանագրերով ռիսկեր չի արձանագրել:

2.7. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Հաշվետու տարում վերահսկողությունն իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծառայությունների և ապրանքների գնումների նկատմամբ:

Ծրագրերի ֆինանսավորման հետ կապված ընդհանուր խնդիրներ

- «Հատուկ կրթություն» ծրագրով հաշվետու ժամանակաշրջանում ֆինանսավորումը կազմել է 1,433,849.1 հազ. դրամ: Միջոցները հատկացվել են թվով 12 ՊՈԱԿ-ի:

- Արձանագրվել է, որ նախարարության թվով 4 պետական ոչ առևտրային կազմակերպությունում «սան/օրերը» սահմանվածից ավելի հաշվարկելու հետևանքով սննդի ձեռք բերման նպատակով նախատեսվել է 23,015.0 հազ. դրամ ավելի գումար, որը վերահսկողության ընթացքում ֆինանսավորումից պակասեցվել է: Արձանագրված 23,015.0 հազ. դրամը ենթակա է վերադարձման պետական բյուջե:

- «Մասնագիտացված հանրակրթական ուսուցում» ծրագրով հաշվետու ժամանակաշրջանում ֆինանսավորումը կազմել է 1,572,248.1 հազ.դրամ: Միջոցները հատկացվել են թվով 5 ՊՈԱԿ-ի և մեկ պետական մասնակցությամբ ՓԲԸ-ի:

Արձանագրվել է, որ ծրագրով նախատեսված միջոցներից 194,921.9 հազ. դրամը վերահսկողության ընթացքում ֆինանսավորումից պակասեցվել է:

- «Ապարանի ռազմամարզական վարժարան» ՊՈԱԿ-ի սովորողների համակազմ չունենալու հետևանքով նախահաշվից պակասեցված 144,612.4 հազ. դրամը:

- «Տիգրան Մեծի անվան ռազմամարզական վարժարան» ՊՈԱԿ-ին սննդամթերքի ձեռք բերման սահմանվածից ավելի հաշվարկված 5,429.2 հազ.դրամը:

- Ծրագրի գծով առաջացած 44,880.3 հազ. դրամ ազատ մնացորդ /նախատեսվածի և կնքված պայմանագրերի տարբերություն/:

Արձանագրված և ֆինանսավորումից պակասեցված 194,921.9 հազ. դրամը ենթակա է վերադարձման պետական բյուջե:

- Կատարված հաշվարկների արդյունքների և կնքված պայմանագրերի համադրմամբ արձանագրվել է, որ ՊՈԱԿ-ներին և ՓԲԸ-ին հիմնականում դաստիարակների, ուսումնաօժանդակ անձնակազմի հաստիքային միավորների սահմանվածից ավելի նախատեսման հետևանքով հատկացվել է 355,612.8 հազ.դրամ ավելի գումար, այդ թվում`

- «Երևանի Անանիա Շիրակացու անվան կրթահամալիր» ՓԲԸ-ին` 147,041.9 հազ.դրամ,

- «Փոքր Միեր կրթահամալիր» ՊՈԱԿ-ին՝ 81,674.3 հազ.դրամ,
- «ԵՊՅ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ 14,146.9 հազ.դրամ,
- «Արմավիրի Տ.Մեծի անվան ռազմամարզական վարժարան» ՊՈԱԿ-ին՝ 35,352.9 հազ.դրամ,
- «Ապարանի ռազմամարզական վարժարան» ՊՈԱԿ-ին՝ 77,396.8 հազ.դրամ:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանվել է «մասնագիտացված հանրակրթական դպրոց» հասկացությունը, որը ռազմագիտության, սպորտի, արհեստների, արվեստի կամ գիտության որևէ բնագավառում հանրակրթական հիմնական մասնագիտացված ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ է:

Սակայն, վերահսկողության ընթացքում արձանագրվել է, որ մասնագիտացված հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունն ու հանրակրթական մասնագիտացված ծրագրերը մշակված և հաստատված չէին:

Չմատուցված ծառայության դիմաց վճարում

«Փոքր Միեր կրթահամալիր» ՊՈԱԿ-ի և նախարարության միջև կնքվել է 385,825.8 հազ. դրամի պայմանագիր:

Ստուգմանը պարզվել է.

- նախարարության կողմից բյուջեի հիմքում դրված հաշվարկային ցուցանիշներին համապատասխան, 271 սովորողի համար 365 օրվա հաշվով սննդամթերքի ձեռք բերման համար հաշվարկվել և վճարվել է 145,504.0 հազ. դրամ:

Սակայն, ծառայությունը փաստացի մատուցվել է 264 օր:

Չմատուցված ծառայության արժեքը սննդամթերքի մասով կազմում է 40,262.7 հազ. դրամ, որը, համաձայն նախարարության հետ կնքված պայմանագրի 5.8 կետի, ենթակա է վերականգնման պետական բյուջե:

- խախտելով գործող օրենսդրության պահանջներն՝ առանց գնման ընթացակարգերի և պայմանագրերի, կրթահամալիրը նախընտրելի անձանցից ձեռք է բերել 45,608.0 հազ. դրամի սննդամթերք. ի դեպ նույն անձինք կրթահամալիրին սննդամթերք են մատակարարել նաև 2012թ.-ին: Դեռ ավելին, այդ անձանցից մեկին կրթահամալիրը փոխանցել է 1,264.7 հազ. դրամ գումար, որի դիմաց որևէ մատակարարում չի իրականացվել:

Միաժամանակ, պետք է նշել, որ վերահսկողության ընթացքում արձանագրված բոլոր խախտումների և թերությունների վերացման և հետագայում դրանց բացառման նպատակով Կրթության և գիտության նախարարությունը, ի տարբերություն մյուս պետական մարմինների, ցուցաբերել է կառուցողական մոտեցում: Արդյունքում, «Վերահսկիչ պալատ և վերահսկվող օբյեկտ» համագործակցության շնորհիվ բացահայտված շատ խնդիրներ վերահսկողության ընթացքում ստացել են իրենց լուծումները:

Հաշվետու տարում կրթական ծրագրերի վերահսկողությամբ արձանագրված խախտումներն ու թերությունները մանրամասն ներկայացված են Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվություններում:

2.8. ՖԻՆԱՆՍՆԵՐ

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատը վերահսկողություն է իրականացրել նաև ՀՀ ֆինանսների նախարարությունում: Բացահայտված խախտումներն ու թերությունները վերաբերում են նախարարության որոշ ստորաբաժանումների գործառնությունների կատարողականին: Մասնավորապես.

ԱՌԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

2011 թվականի ընթացքում աուդիտ իրականացնող 41 անձանցից Տեսչության կողմից ստուգվել են միայն 3-ը:

2012 թվականի ընթացքում աուդիտ իրականացնող 37 անձանցից Տեսչության կողմից կրկին ստուգվել է մեկը և վերստուգվել մեկը:

Տեսչությունը չի իրականացրել ՀՀ ֆինանսների նախարարի 30.11.2011թ. թիվ 938-Ա հրամանով նախատեսված 2012 թվականին իրականացվելիք ստուգումների ծրագիրը, որով նախատեսվում էր իրականացնել բոլոր 36 աուդիտորական կազմակերպություններում ստուգումներ, մինչդեռ կատարվել է ընդամենը մեկ ստուգում:

2013 թվականին իրականացվելիք ստուգումների ծրագիրը հաստատելու մասին թիվ 1027-Ա հրամանով աուդիտ իրականացնող 31 անձանցից նախատեսվել է ստուգումներ իրականացնել 26-ի մոտ, մինչդեռ դեկտեմբերի 1-ի դրությամբ կատարվել էր միայն 8 ստուգում:

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Վիճակախաղերի կազմակերպման գործունեության լիցենզիա ստանալու համար, համաձայն ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 1-ի N 987-Ն որոշման պահանջների, հայտատուն պարտադիր պետք է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալություն ներկայացնի՝ բանկում 200 միլիոն դրամի չափով «երաշխիքային ավանդ»-ի առկայության մասին տեղեկանք:

Տրամադրված թվով 5 թույլտվությունից առկա են դեպքեր, երբ թույլտվության տրամադրման պահին երաշխիք չի եղել կամ եղած բանկային երաշխիքը հետագայում բացակայել է: Մինչդեռ, ՀՀ օրենսդրությամբ հստակեցված չէ «երաշխիքային ավանդ» հասկացության նշանակությունը:

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱՆՁՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Տեսչությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ՀՀ ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 954-Ա հրամանով հաստատված 2012 թվականին իրականացվելիք ստուգումների ծրագրով նախատեսված լիցենզիաների պայմանների և պահանջների կատարման նկատմամբ հսկողական գործառնություն լիարժեք չի իրականացրել:

Նախատեսված 97 ստուգումից 4-ի դեպքում ընդհանրապես ստուգում չի կազմակերպվել, 10-ի դեպքում դրանք եղել են սահմանված ժամկետների խախտմամբ:

**«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿ (ԾԻԳ)**

Ստեղծվել է 1999 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՀ կառավարության թիվ 765-Ն որոշմամբ:

Նպատակը` ՀՀ կառավարության հավանությանը արժանացած օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի միջոցների հաշվին հանրապետական գործադիր մարմինների կողմից մշակված ծրագրերի, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեով ՀՀ ֆինանսների նախարարությանը հատկացված միջոցների հաշվին իրականացվելիք ՀՀ ֆինանսների նախարարի կողմից սահմանված ծրագրի իրականացման համար անհրաժեշտ աշխատանքների կատարման ապահովումն է:

Ծրագրերի քանակը` 11: Հատկացված գումարի չափը` 65.5 մլն ԱՄՆ դոլար:

	Նախատեսված գումար	Փաստացի ծախս
Վարկեր	50,000.0	16,357.5
Դրամաշնորհներ	3,633.0	1,404.8
Պետական բյուջե	11,931.6	3,436.8
ԸՆԴԱՄԵՆԸ	65,564.6	21,199.1

հազ. ԱՄՆ դոլար

Ծանոթություն - Վերահսկիչ պալատը վերոհիշյալ ԾԻԳ-ը վերահսկել է 2010 թվականին (ՀՀ ՎՊ խորհրդի 24.09.2010 թվականի թիվ 26/12 որոշում): Ստուգվել է «Պետական հատվածի բարեփոխումներ» և «Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարում» ծրագրերը:

ԾԻԳ-ի կողմից իրականացվող 11 ծրագրերն են`

- | | |
|--|--------------------|
| 1. Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիր, 7963- AM | 28,4 մլն ԱՄՆ դոլար |
| 2. Հարկային վարչարարության արդիականացման վարկային ծրագիր, 5114- AM | 15,0 մլն ԱՄՆ դոլար |
| 3. Պետական հատվածի արդիականացման երկրորդ վարկային ծրագիր, 7854-AM | 11,1 մլն ԱՄՆ դոլար |
| 4. Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագիր, 7848- AM | 6,1 մլն ԱՄՆ դոլար |
| 5. Հայաստանի հանրային ֆինանսական կառավարման հզորացման դրամաշնորհային ծրագիր TF 012529 | 1,16 մլն ԱՄՆ դոլար |
| 6. Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների 2-րդ ռազմավարության իրականացման դրամաշնորհային ծրագիր, TF 096227 | 0,74 մլն ԱՄՆ դոլար |

- | | | |
|-----|--|--------------------|
| 7. | Հայաստանի կառավարության ֆիսկալ կառավարման և հարկային պարտավորությունների կատարման կարողությունների բարելավման դրամաշնորհային ծրագիր, TF 096224 | 0,67 մլն ԱՄՆ դոլար |
| 8. | Հայաստանի կառավարության կարգավորող բարեփոխումների գրասենյակի կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիր TF 011972 | 0,65 մլն ԱՄՆ դոլար |
| 9. | Հանրային հատվածի վերահսկողության (աուդիտի) կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիր (Վերահսկիչ պալատ) TF 011901 | 0,64 մլն ԱՄՆ դոլար |
| 10. | Ազգային ժողովի քաղաքականության ձևավորման և հանրության հետ երկխոսության կարողությունների հզորացման դրամաշնորհային ծրագիր, TF 096229 | 0,63 մլն ԱՄՆ դոլար |
| 11. | ՀՀ ֆինանսների նախարարության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիր TF 011901 | 0,42 մլն ԱՄՆ դոլար |

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու է պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով`

- **Գնումները համակարգողը**
- **Պատասխանատու ստորաբաժանումը**
- **Գնահատող հանձնաժողովը:**

Եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա պատասխանատու ստորաբաժանման և /կամ/ գնահատող հանձնաժողովի կազմում ներառելու և /կամ/ նրա աշխատանքների կատարմանն աջակցելու նպատակով հրավիրվում է փորձագետ (մասնագետ): Գնման գործընթացում վճարովի ծառայություն է մատուցում միայն հրավիրված փորձագետը(ները):

Սակայն, օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային միջոցների հաշվին կատարվող գնումների գործընթացի համար իրավական այլ ակտերով պատասխանատու կառույցներ են սահմանվել նաև

- **Ծրագրի իրականացման գրասենյակներ` ԾԻԳ-ը,**
- **Ծրագրերի համակարգման գրասենյակ (Ծրագրերի կառավարման խումբ)` ԾՀԳ-ը,**
- **Ծրագրերի կառավարման խորհուրդը:**

Առաջին և երկրորդ կառույցները ծառայություններ իրականացրել են վճարովի հիմունքներով, երրորդը գործել է հասարակական հիմունքներով:

ՀՀ կառավարությունը, դեռևս 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 765 որոշումով սահմանել է ԾԻԳ-երի հիմնական խնդիրները`

- ՀՀ կառավարության անունից նշված աշխատանքների պատվիրատուի գործառույթների իրականացումը, պայմանագրերի նախագծերի նախապատրաստումն ու կնքումը:
- Ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման նպատակով տեխնիկական առաջադրանքների պատրաստումը:
- Առաջադրանքների գնահատումն ու վերլուծումը:
- Մոնիթորինգի իրականացում, ներառյալ համապատասխան միջազգային կամ օտարերկրյա վարկատու կազմակերպությունների կողմից:
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված ձևով հաշվետվությունների կազմում և ներկայացում:

ՀՀ կառավարության 22 սեպտեմբերի 2011 թ. թիվ 1356-Ն որոշմամբ նախատեսվել է, որ գնահատման գործընթացի համար հանձնաժողովը կազմավորվում է վարկային ծրագիր իրականացնող կազմակերպության (ԾԻԳ) ղեկավարի հրամանով:

Վերահսկիչ պալատի վերահսկողության ընթացքում պարզվել է, որ վարկային ծրագրերի գնահատման գործընթացն իրականացնելու համար հանձնաժողովները ձևավորվել են ծրագրերին մասնակից նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարների հրամաններով:

ՀՀ կառավարության 05 մայիսի 2011 թ. թիվ 562-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի (նույն ԾԻԳ-ը) կանոնադրության 8-րդ կետի 7-րդ մասով նախատեսված է, որ ՀՀ կառավարության անունից համապատասխան ծրագրում նշված աշխատանքների պատվիրատուի գործառույթներն իրականացնում է հիմնարկը, սակայն բոլոր պայմանագրերում առկա է երկրորդ պատվիրատու:

Վարկային ծրագրի գործառնական ձեռնարկը, որը մշակվում և հաստատվում է համապատասխան ծրագրի շահառու գերատեսչության կողմից, այնուհետև համաձայնեցվում է Համաշխարհային բանկի հետ: Փաստորեն, ձեռնարկը դառնում է վարկային համաձայնագրի անբաժանելի մաս և ՀՀ օրենսդրության նկատմամբ ստանում գերակա կարգավիճակ:

Վարկային ծրագրի գործառնական ձեռնարկներով տրվել է ծրագրի կառավարման գործառույթների նոր վերաբաշխում: Չնայած այն հանգամանքին, որ գործառնական ձեռնարկները հաստատվում է կառավարման խորհրդի որոշմամբ:

ՀՀ կառավարության որոշմամբ ԾԻԳ-ին վերապահված գործառույթները վերապահվել են ծրագրին առնչվող այլ գերատեսչությունների: Մասնավորապես, սոցիալական պաշտպանության վարկային ծրագրի գործառնական ձեռնարկով

- տեխնիկական առաջադրանքը / տեխնիկական մասնագրերը մշակում է համապատասխան շահառու գերատեսչության կողմից,
- գնահատող հանձնաժողովը կազմվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հրամանով,
- Ծրագրի իրականացման համար պատասխանատու գերատեսչության ղեկավարը և ԾԻԳ-ի տնօրենը, որոնք հանդես են գալիս ՀՀ անունից որպես պատվիրատու, պայմանագիր են կնքում խորհրդատուի կամ մատակարարի հետ:

• Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության վարկային ծրագրի գործառնական ձեռնարկով՝

- առաջին բաղադրիչի միջոցառումների նախապատրաստման տարեկան աշխատանքային ծրագրերի և բյուջեների, տեխնիկական առաջադրանքների, հաշվետվողականության և այլ միջոցառումների իրականացման համակարգման համար պատասխանատու է Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը:
- Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը պատասխանատու է առաջին և երկրորդ բաղադրիչների բոլոր միջոցառումների իրականացման համար՝ ներառյալ տեխնիկական առաջադրանքները, հաշվետվողականությունը:
- Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը կամ էլ. կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակը պատասխանատու է մատակարարների պայմանագրի համակարգման և աշխատանքների ընդունման համար:
- Գնահատող հանձնաժողովները ձևավորվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության որոշմամբ:

Ծրագրի մոնիթորինգի և վերահսկողության գործառույթը ՀՀ կառավարության 1999թ. դեկտեմբերի 22 թիվ 765 որոշման համաձայն վերապահվել է ԾԻԳ-ին, մոնիթորինգի ֆունկցիան գործառնական ձեռնարկներով վերապահվել է ծրագրի կառավարման խմբին, իսկ վերահսկողության գործառույթը ծրագրի կառավարման խորհրդին:

Այսպիսով, ՀՀ կառավարության որոշմամբ ԾԻԳ-ին անրագրված գործառույթները գործառնական ձեռնարկներով վերապահվել է ծրագրին առնչվող այլ կազմակերպությունների: ՀՀ կառավարությունը թիվ 765-ն որոշմամբ ՀՀ անունից վարկային ծրագրերի աշխատանքների պատասխանատու է ճանաչվել ծրագրերի իրականացման գրասենյակը, դրանից բխող ողջ հետևանքներով: Գործառնական ձեռնարկով նման կարգավիճակ է ստանում նաև ծրագրի շահառու գերատեսչությունը և նույնպես իր ամբողջ հետևանքներով, սակայն գործառնական ձեռնարկը հաստատող կառավարման խորհուրդը նման իրավասությամբ օժտված չէ: Հետևաբար իրավական դաշտը, որում իրականացվում է ծրագրի կառավարումը, գործառնական ձեռնարկի դրույթների մասով օրինականության խնդիր ունի:

ԾԻԳ-ի պահպանման ծախսերի համար, որի աշխատակազմը բաղկացած է 15 աշխատակցից, իրականացվող յուրաքանչյուր ծրագրից կատարվել է մասհանում, որը միայն ստուգվող չորս ծրագրերի մասով նախատեսվել է 2,517.4 հազ. ԱՄՆ դոլար՝ դրանց իրականացման ամբողջ ժամանակահատվածի համար:

Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության վարկային ծրագրից պահպանման ծախսեր է տրամադրվել «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամին» 607.6 հազ. ԱՄՆ դոլար, էլ. կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ 127.2 հազ. ԱՄՆ դոլար:

Այս ծրագրերից ֆինանսավորվել է նաև ծրագրերի համակարգման գրասենյակի /ծրագրի համակարգման խումբ/ աշխատանքները:

Ընտրանքային ստուգմամբ պարզվել է.

1. Պետական հատվածի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի քաղաքականության ձևավորման և ծառայությունների մատուցման ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում բաղադրիչով ՀՀ կառավարության աշխատակազմին ցանցային սարքավորումների մատակարարման և տեղադրման համար պայմանագիր է կնքվել «Յունիքոմփ» ՓԲԸ-ի հետ, որի արժեքի մի մասը՝ 546,959-ը (առանց հարկերի)

պայմանագրում նշվել է ԱՄՆ արժույթով, իսկ մի մասը՝ 30,366,240-ը ՀՀ (ներառյալ ԱԱՀ) արժույթով:

Հայտատուն հանդիսացել է ՀՀ ռեզիդենտ, սակայն հայտում ապրանքների գնանշումն իրականացրել է արտարժույթով, խախտելով «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Պատվիրատուի հասցեով ներկրված պայմանագրով նախատեսված 546.9 հազ. ԱՄՆ դոլար արժեքով ապրանքների ուղեկցող բոլոր փաստաթղթերը ներկայացվել են ենթամատակարար հանդիսացող «Աբրիս Դիստրիբյուշն» ընկերության (ԱՄՆ, Նյուջերսի նահանգ, ք.Սանալապան) անունից:

ԾԻԳ-ի կողմից 546.9 հազ. ԱՄՆ դոլարը փոխանցվել է ենթամատակարարի՝ «Աբրիս Դիստրիբյուշն» ընկերության (ԱՄՆ) հաշվին, իսկ մաքսազերծման և ներմուծվող ապրանքների համար ԱԱՀ-ի վճարման ենթակա գումարները ԾԻԳ-ը վճարել է «Աբրիս Դիստրիբյուշն» ընկերության (ԱՄՆ) անունից ՀՀ ներմուծված ապրանքների դիմաց: «Յունիքոմփ» ՓԲԸ-ին, որպես պայմանագրի կողմ, ապրանքների մատակարարման վերաբերյալ հաշիվ ապրանքագիր չի ներկայացրել: Հարկային վարչարարության իրականացման տեսանկյունից, տվյալ դեպքում ընկերության մոտ առաձևանում են տվյալ գործարքով հարկային պարտավորությունների հաշվարկման որոշակի խնդիրներ:

Այս դեպքում գործարքը ռիսկային է, քանի որ մրցույթը շահել է «Յունիքոմփ» ՓԲԸ-ն, պայմանագիր է կնքվել նրա հետ, սակայն գումարն ամբողջությամբ փոխանցվել է ենթամատակարար «Աբրիս Դիստրիբյուշն» ընկերության (ԱՄՆ) հաշվին:

Անհրաժեշտություն է առաջանում հանդիսակազ ստուգման:

2. Պետական հատվածի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի ներքին աշխատանքային հոսքերը և արտաքին հաղորդակցությունը կառավարելու համար տեղեկատվական համակարգերի մշակում բաղադրիչի շրջանակում ՀՀ Ազգային ժողովի համար գույք (կահույք) ձեռք բերելու նպատակով մրցութային հայտի պահանջների խախտմամբ «Վեկս» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր, որի արժեքի մի մասը՝ 118,245-ը (առանց հարկեր) պայմանագրում նշվել է ԱՄՆ արժույթով, մյուս մասը՝ 49,907,106-ը (ներառյալ ԱԱՀ) ՀՀ արժույթով, խախտելով “Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին” ՀՀ օրենքի պահանջները:

Պատվիրատուի հասցեով ներկրված ապրանքների ուղեկցող բոլոր փաստաթղթերը ներկայացվել է ենթամատակարար «ՍիԱյես Ինթերնեյշնլ Իմպեքս» ԿՈՒՆԵՎ (Չինաստան) անունից: Պայմանագրով նախատեսված գումարից 118,2 հազ. ԱՄՆ դոլարը ԾԻԳ-ի կողմից առանց համապատասխան փաստաթղթերի փոխանցվել է ենթամատակարարի հաշվին, իսկ մաքսազերծման և ներմուծվող ապրանքների համար ԱԱՀ-ի վճարման ենթակա գումարները ԾԻԳ-ը վճարել է «ՍիԱյես Ինթերնեյշնլ Իմպեքս» ԿՈՒՆԵՎ (Չինաստան) ընկերության անունից ՀՀ ներմուծված ապրանքների դիմաց:

«Վեկս» ՍՊԸ-ն, որպես պայմանագրի կողմ, ապրանքների մատակարարման վերաբերյալ հաշիվ ապրանքագիր չի ներկայացրել:

Պատվիրատուի կողմից կահույքի ձեռքբերման համար անհրաժեշտ նախահաշվային գնի ձևավորման, ինչպես նաև շուկայական գների ուսումնասիրություն չի կատարվել:

Անհրաժեշտություն է առաջանում հանդիսակազ ստուգման:

3. **Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների 2-րդ ռազմավարության իրականացման դրամաշնորհային ծրագրի** շրջանակում հաշվապահական հաշվառման իրավական ակտերի նախագծերի և ձեռնարկի ամբողջական փորձարկման ու հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգի ներդրման աշխատանքների ձեռքբերման համար «Four Assist Development Consulting Limited» (Կիպրոս) կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր 704.1 հազ. ԱՄՆ դոլար արժեքով, որը ամբողջությամբ (բացառությամբ հարկերի) փոխանցվել է Կիպրոս ընկերության հաշվին: Կիպրոսյան ընկերությունն իր հերթին պայմանագրի կնքման նույն օրը, պայմանագրով նախատեսված խորհրդատվական ծառայության մատուցման ամբողջ ծավալի համար, 288.0 հազ. ԱՄՆ դոլար արժեքով ենթամատակարարի պայմանագիր է կնքել ՀՀ-ում գրանցված «Փի-էյջ –Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ի հետ:

Պայմանագրով նախատեսված ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառմանը կարգավորող իրավական ակտերի նախագծերի, պիլոտավորվող կազմակերպություններում ավտոմատացված հաշվապահական համակարգի փորձնական ներդրման ու այդ կազմակերպություններում կարողությունների զարգացման աշխատանքները պիլոտավորվող չորս կազմակերպություններից և ոչ մեկում չեն ներդրվել և դրանք չեն վերազինվել:

2008-2009թթ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բարեփոխումների իրականացման դրամաշնորհային ծրագրի շրջանակում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրումն ապահովող հիմնական իրավական ակտերի նախագծերը մշակելու համար, որոնք հետագայում հանդիսացել են Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների 2-րդ ռազմավարության իրականացման դրամաշնորհային ծրագրի տեխնիկական առաջադրանքի անբաժանելի մաս, 29.08.2008թ 142,195.2հազ. դրամ արժեքով պայմանագիր է կնքվել “Continental Financial Services, Inc.” ընկերության հետ:

Հատկանշական է, որ «Continental Financial Services, Inc.» ընկերության և «Փի-էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ի միջև նույն օրը կնքվել է պայմանագիր, որով խորհրդատուի գործառույթներն` ենթակապալի սկզբունքի հիման վրա կրկին իրականացրել է «Փի-էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ն:

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների 2-րդ ռազմավարության իրականացման դրամաշնորհային ծրագրով նախատեսված աշխատանքները չեն սկսվել զրոյական մակարդակից, սակայն 2-րդ ռազմավարության իրականացման համար, որն իրենից ներկայացնում է նույն իրավական ակտերի լրամշակված տարբերակը, պահանջվել է 309.8 հազ. ԱՄՆ դոլարով ավելի մեծ գումար, քան նախորդ ծրագրով:

4. **Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարություն վարկային ծրագրի Էլեկտրոնային հասարակության ենթակառուցվածքի զարգացում բաղադրիչի** շրջանակում հավաստագրման կենտրոնի ստեղծման համար PWPW S.A./ Լեհաստան/ ընկերության հետ կնքվել է պայմանագիր /11.05.2012 - 27.09.2013/ 788.3 հազ. ԱՄՆ դոլար արժեքով, որի դիմաց ստուգման օրվա` 01.12.2013թ. դրությամբ կատարվել է 111.4 հազ. ԱՄՆ դոլարի չափով աշխատանք:

Ծրագրի հանձնումն ըստ պայմանագրի ամբողջությամբ պետք է ավարտված լիներ 2012 թվականի սեպտեմբերի 27-ին, որից հետո մինչև 2013 թվականի սեպտեմբերի

27-ը պետք է իրականացվեր երաշխիքային սպասարկում, սակայն մինչ օրս աշխատանքները չեն ավարտվել, ավելին, ստուգման ընթացքում դեռ չէին ավարտվել անգամ ժամանակացույցով սահմանված վերջնական հանձնման փուլի աշխատանքները, որոնց համար վերջնաժամկետ էր սահմանվել 2012թ. սեպտեմբեր ամիսը: Պայմանագրով նախատեսված ժամկետների ուշացման համար պատվիրատուի կողմից պատժամիջոցներ չեն կիրառվել, /պայմանագրի արժեքի 10 տոկոս/, որն ըստ պայմանագրի կազմում է շուրջ 78.0 հազ. ԱՄՆ դոլար:

Հավաստագրման Կենտրոնի հիմնադրման տեխնիկական օժանդակությանը վերաբերող աշխատանքներն իրականացնելու համար 6 մասնագետների հետ կնքվել են պայմանագրեր 253,471 ԱՄՆ դոլար արժեքով, որի դիմաց վճարվել է 192,040 ԱՄՆ դոլար: Չնայած այն հանգամանքին, որ հավաստագրման Կենտրոնի հիմնադրման տեխնիկական օժանդակությանը վերաբերող աշխատանքներն իրականացնելու համար արդեն ծախսվել է նախատեսված գումարի 75.8 տոկոսը, հավաստագրման կենտրոնի ստեղծման, PWPW S.A./ Լեհաստան/ ընկերության կողմից ծրագրի հանձնման, մեկ տարվա երաշխիքային սպասարկման աշխատանքները մինչ օրս չեն ավարտվել:

5. Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի «Ընդհանուր օժանդակություն սոցիալական պաշտպանության ոլորտին» բաղադրիչի համար, որի նպատակն է եղել ինտեգրել սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային կենտրոնները և դարձնել «մեկ պատուհանի» սկզբունքով ծառայությունների մատուցման համակարգ: Սոցիալական պաշտպանության տարածքային ծառայությունների շենքերի վերանորոգում, տեղեկատվական հոսքերի միասնական ցանցի ստեղծում, ինտեգրված սոցիալական ծառայությունների համար իրավական հիմքի ապահովում ծրագրերով փաստացի ծախսվել է 3,8 մլն ԱՄՆ դոլար:

Ինտեգրացված սոցիալական ծառայությունների կառուցվածքագործառուբային մոդելի մշակման համար «Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիայի հետ կնքվել է պայմանագիր 86.1 հազ. ԱՄՆ դոլար արժեքով: Պայմանագրի կատարման արդյունքում խորհրդատուի կողմից ներկայացվել է ինտեգրացված սոցիալական ծառայությունների կառուցվածքագործառուբային երկու մոդել, սակայն պատվիրատուի կողմից խորհրդատուի առաջարկած և ոչ մի մոդել չի ներդրվել:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից առաջարկվել է նոր` այլընտրանքային մոդելի տարբերակ, որը ենթադրել է «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունք:

Պատվիրատուի կողմից սոցիալական ծառայությունների տրամադրման ինտեգրումը նախատեսվել է իրականացնել մեթոդական / գործառուբային, իրավակառավարչական, տեղեկատվական և ֆիզիկական կենտրոնացման եղանակներով և ուղղություններով, սակայն նախատեսված ուղղություններից և եղանակներից դեռևս իրականացվել է միայն ֆիզիկական կենտրոնացումը, իսկ տեղեկատվական ինտեգրումն ընթացքի մեջ է:

Առաջարկված տարբերակի համաձայն բոլոր 4 ծառայությունները տեղակայվել են մեկ կենտրոնում` պահպանելով առանձին ղեկավարման իրենց կենտրոնները:

Ստեղծված տարածքային համալիր կենտրոնները իրենցից ներկայացնում են կազմակերպությունների պարզ հավաքածու, տարբեր մարդկանց, մասնագետների, ծառայությունների և շինությունների միավորում, որոնք ղեկավարվում են 4 կառույցների կողմից, ինչը նվազեցնում է գործընթացների կազմակերպման արդյունավետությունը, իսկ մեկ կետից կառավարում չունենալու պարագայում կազմակերպական խնդիրները տարածքային կենտրոններում լուծում չեն ստանում:

«Մեկ պատուհանի» սկզբունքով ծառայությունների մատուցման սկզբունքը չի իրականացվել, փաստացի այժմ կիրառվում է «մեկ ընդունարանով երեք պատուհանների» սկզբունքով ծառայությունների մատուցումը: Սոցիալական ծառայություն մատուցող ծառայություններից յուրաքանչյուրը գործերը վարում է նույն ձևով, ինչպես նախկինում՝ առանց ինտեգրացված սոցիալական ծառայության:

Ծրագրով նախատեսված սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերի միջև տեղեկատվության ինքնաշխատ եղանակով փոխանակությունը պետական կառավարման մարմինների հետ իրականացված չէ (Կադաստր, ՊԵԿ, Ճանապարհային ոստիկանության ռեգիստր, ձեռնարկությունների գրանցման պետական ռեգիստր և այլն): Համակարգը ինքնաշխատ եղանակով ինտեգրված է միայն բնակչության պետական ռեգիստրի հետ:

Նման իրավիճակ ստեղծվել է ինտեգրման նախորդ՝ Վանաձոր և Մասիս քաղաքներում կիրառված մոդելի օրինակով, որն իր կառուցվածքով բավականին մոտ է առաջարկված մոդելին, երբ մեկ կետից կառավարում չունենալու պարագայում կազմակերպական խնդիրները տարածքային կենտրոններում մնացել են չլուծված:

Առաջարկված նոր մոդելն ըստ էության, չի հանգեցնում ծախսերի նվազեցման, քանի որ 4 կառույցի համար պահպանման ծախսեր և կրկնվող գործառույթներով համապատասխան բաժիններ կան յուրաքանչյուր գործակալությունում (ֆինանսական, տեղեկատվական, կառավարման ապարատ, քարտուղարություն և այլն):

Բաղադրիչի շրջանակում ձեռքբերված 194.9 հազ. ԱՄՆ դոլար արժեքով 25 հատ թվային հերթագրող սարքից և 25 հատ էլեկտրոնային տեղեկատվական տերմինալից ոչ մեկը կենտրոններ այցելությունների ընթացքում չէին օգտագործվում և ինտեգրված չէին ցանցին:

Տարածքային կենտրոններին հատկացված 16.250.0 հազ. դրամ արժեքով 50 հատ հեռուստացույցները միացված չէին ցանցին և չէին ծառայում նպատակին: Բազմաթիվ կենտրոններում տեսախցիկները մոնտաժված և միացված չէին ու չէին գործում:

Ելնելով վերոգրյալից՝ վերջնական եզրակացությունը ձևավորելու և օբյեկտիվ իրավիճակը ներկայացնելու համար նպատակահարմար է շարունակել նշված ծրագրերի ուսումնասիրությունները, որոնք կպահանջեն ձեռքբերվող ապրանքների և ծառայությունների գների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև մատակարար կազմակերպությունների մոտ հանդիպակաց ստուգման իրականացում:

Իրականացված ծրագրերի, մատակարարված ապրանքների և ծառայությունների գների, ինչպես նաև մրցույթի կազմակերպման ընթացակարգերի շուրջ իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ տվյալ գործընթացներն ունեցել են լուրջ թերություններ, պարունակել են ռիսկեր և ունեն հետագա ստուգումների կարիք:

Վերահսկիչ պալատը նախատեսում է նաև իր արտասահմանյան գործընկերների աջակցությունը վերահսկողության ընթացքում: Նմանատիպ բնութագրական խախտումներ առկա են նաև այլ ծրագրերում: Վերահսկիչ պալատը նպատակադրվել է վերահսկողության դաշտում պահել բոլոր 11 ծրագրերը մինչև դրանց ավարտը:

2.9. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Վերահսկիչ պալատը պարբերաբար անդրադառնում է երկրի համար կարևոր նշանակություն ունեցող բնապահպանական խնդիրներին:

Դինամիկ կերպով զարգանում է նաև տվյալ վերահսկողության կատարելագործմանն ուղղված միջազգային համագործակցությունը:

Վերահսկողության կոնկրետ թեմաներն ընտրվելու են տվյալ ժամանակաշրջանում առաջնահերթ կարևորություն ունեցող խնդիրների շրջանակներից:

Հաշվետու տարում վերահսկողությունն իրականացվել է «Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ-ի և ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության գործառույթների նկատմամբ: Բացահայտվել են էական նշանակություն ունեցող խնդիրներ: Մասնավորապես.

- Արգելոցի տարածքում ֆիզիկական անձի կողմից արգելոցային ռեժիմի խախտմամբ իրականացվել է ապօրինի հողօգտագործում: Արգելոցի տարածքում ֆիզիկական անձի կողմից սեփականության իրավունքով տնօրինվող 117քմ մակերեսով շինությունների սպասարկման համար հատկացված 1375քմ մակերեսով հողատարածքի փոխարեն ինքնական օգտագործվում է շուրջ 3-ից 4 հեկտար:

- Արգելոցի տարածքում գտնվող Գյուլայսոր և Գիլանլար կոչվող նախկին գյուղատեղերում ապրող բնակիչները գյուղատնտեսական գործունեությամբ խախտում են պետական արգելոցի պահպանության ռեժիմը: Այս տարածքներում անվերահսկելի է ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի պաշտպանությունը: Պահպանության ռեժիմի հիմնական խախտումներից են անասունների ապօրինի արածեցումն ու խոտհունձը:

- Արգելոցի ճանապարհների ուղեփակոցները պատշաճ չեն հսկվում, արգելոցի սահմաններին և մուտքերին տեղադրված չեն անհրաժեշտ քանակով նշասյուներ և հսկողության տեխնիկական միջոցներ: Համայնքային արոտավայրեր և խոտհարքեր տանող ճանապարհների բացակայության պատճառով օգտագործվում են արգելոցի տարածքները:

Ակնհայտ է, որ արգելոցում իրականացվող պահպանության աշխատանքը չունի բավարար արդյունավետություն, քանի որ նախատեսված է, որ յուրաքանչյուր տեսուչին բաժին է ընկում արգելոցի 700 հա տարածք: Պարզ է, որ դա չի կարող իրատեսական լինել: Դեռ ավելին, տեսուչները լիարժեք ապահովված չեն անհրաժեշտ տեխնիկական և տրանսպորտային միջոցներով:

- Արգելոցի գործող սահմանները չեն համապատասխանում էկոհամակարգերի զարգացման և պահպանման պայմաններին: «Խոսրովի անտառ» պետական արգելոցի 2010-2014 թվականների կառավարման պլանով, տարածքը էկոհամակարգերի ընդգրկման տեսակետից առավել ամբողջական դարձնելու,

սահմանների կտրտվածությունը վերացնելու նպատակով, առաջարկվել էր արգելոցին միացնել 5849.7 հա հողեր, որը մինչ օրս դեռևս չի կատարվել:

Բնապահպանական պետական տեսչություն

- Թեև ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության 2012թ. և 2013թ. ծրագրերով նախատեսված է եղել «Խոսրովի անտառ» պետական արգելոցում իրականացնել ստուգումներ, այնուամենայնիվ, հաշվետու ժամանակաշրջանում փաստացի որևէ ստուգում չի կատարվել և, բնականաբար, որևէ խախտում չի արձանագրվել:
- Ստուգումների տարեկան ծրագրերը իրատեսական չեն կազմվել՝ 2011թ. ստուգումների ծրագիրը կատարվել է 27.2 %-ով, 2012թ.՝ 7.5%-ով, իսկ 2013թ. ծրագրով նախատեսված 2593 օբյեկտներից ստուգումներ իրականացվել են ընդամենը 65-ում, կամ ծրագրով նախատեսվածի 2.5 %-ում:
- 01.01.2011-01.11.2013թթ. ժամանակահատվածում արձանագրված խախտումներով՝ 560,713.0 հազ. դրամ տուգանքի գումարից ՀՀ պետական բյուջե մուտք է եղել 286,520.0 հազ. դրամ: Չի վճարվել 274,193.0 հազ. դրամ կամ արձանագրված և վերականգնման ենթակա գումարի 48.9 %-ը:
- Տեսչության կողմից պատշաճ չի հսկվել ստուգման արդյունքներով խախտումների վերացման ուղղությամբ տնտեսվարողներին տրված հանձնարարականների կատարման ընթացքը:
- Խախտվել է «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջը՝ նմանատիպ խախտման համար տարբեր տնտեսվարողների նկատմամբ չի ապահովվել բնապահպանական օրենսդրության միատեսակ կիրառումը. որոշ դեպքերում արձանագրվել են միայն վարչական իրավախախտում, իսկ նմանատիպ այլ դեպքերում կայացվել են որոշումներ ինչպես վարչական իրավախախտման, այնպես էլ շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման համար:
- Տեսչության կողմից վերահսկողություն, իսկ տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատշաճ հսկողություն չի իրականացվել հողային, թափոնների, աղբահանության մասով ՀՀ օրենսդրության կատարման նկատմամբ: Համայնքներում աղբի տեղադրումը իրականացվել է ապօրինի աղբավայրերում, բնակավայրերի մերձակա գյուղատնտեսական նշանակության հողատարածքներում, ճանապարհների և ջրային ռեսուրսների հարևանությամբ, իսկ բնապահպանական վճարներ հիմնականում չեն վճարվել:
- «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 01.01.2011-01.11.2013թթ. ժամանակահատվածում ՀՀ բնապահպանության նախարարին մակերևութային ջրերի աղտոտվածության դեպքերի համար տրված 151 հաղորդումների վերաբերյալ Տեսչության կողմից միջոցառումներ չեն ձեռնարկվել:

Վերոգրյալ խախտումների, թերությունների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվությունում:

2.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Սոցիալական ապահովության ոլորտում Վերահսկիչ պալատի վերահսկողության արդյունքների հիման վրա ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված քայլերի արդյունքում կենսաթոշակների վճարման գործընթացը վերջին տարիներին էական առաջընթաց արձանագրեց:

Ոլորտի բարեփոխումների շարունակականությունն ապահովելու, հնարավոր ռիսկերը բացահայտելու և կանխելու նպատակով Վերահսկիչ պալատը հաշվետու տարում անդրադարձել է ժամանակավոր նպաստների վճարման խնդրին: Մասնավորապես.

Հղիության և ծննդաբերության նպաստ

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 172-րդ հոդվածի հղիության և ծննդաբերության արձակուրդը սահմանվել է՝

ա/ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության)

բ/ բարդ ծննդաբերության դեպքում՝ 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)

գ/ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում՝ 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության):

Հղիության և ծննդաբերության ժամանակավոր անաշխատունակության նպաստը վճարվում է ՀՀ կառավարության 14.07.2011թ. N1024-Ն որոշմամբ հաստատված կարգով:

ՀՀ-ում 2011թ.գրանցվել է 43,340 ծնունդ, նպաստառուների թվաքանակը կազմել է 12 587 մարդ, վճարվել է 3,927,940.0 հազ. դրամ նպաստ:

2012թ. գրանցվել է 42,480 ծնունդ, նպաստառուների թվաքանակը՝ 12,445 մարդ, վճարվել է 3,646,735.8 հազ. դրամ նպաստ:

2013թ.գրանցվել է 41,770 ծնունդ, նպաստառուների թվաքանակը՝ 13,370 մարդ, վճարվել է 5,038,531.0 հազ. դրամ նպաստ:

Այսպիսով, 2013թ.ընթացքում ծնված երեխաների թիվը 2012թ. համեմատ պակասել է 710-ով, մինչդեռ վճարվել է 1,391,795.2 հազ. դրամ ավելի գումար, որը մասամբ պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» օրենքի փոփոխություններով:

Հարկ է նշել, որ 2013թ. պետական բյուջեով նախատեսվածից հղիության և ծննդաբերության նպաստի ծրագրով ավելի է վճարվել 1,927,335.9 հազ.դրամ:

հազ.դրամ

Նպաստի տեսակը	ՀՀ պետական բյուջեով նախատեսված գումարը			Վճարված գումարը			2013թ. պետբյուջեով նախատեսվածից ավել վճարված գումարը
	2011թ.	2012թ.	2013թ.	2011թ.	2012թ.	2013թ.	
Հղիության և ծննդաբերության նպաստ	2,247,228.7	3,096,470.1	3,111,195.1	3,927,940.0	3,646,735.8	5,038,531.0	1,927,335.9
Ժամանակավոր անաշխատունակության նպաստ	2,562,863.5	2,599,434.4	2,803,644.0	2,549,342.9	2,913,040.9	3,612,937.4	809,293.4
Ընդամենը	4,810,092.2	5,695,904.5	5,914,839.1	6,477,282.9	6,559,776.7	8,651,468.4	2,736,629.3

Պարզվել է, որ վարձու աշխատողներին հղիության և ծննդաբերության նպաստներ, մի շարք դեպքերում, նշանակվել են ընդամենը 1-2 ամիս առաջ պայմանագրային աշխատանքի ընդունված հղի կանանց: Հղիության, ծննդաբերության արձակուրդին նախորդած ժամանակահատվածում ակնհայտորեն բարձրացվել են նպաստառուների աշխատավարձը, հավելյալ վճարները և մասնավորապես պարգևատրումները: Այսպես՝

- «Ղ-Տելեկոմ» ընկերության բաժանորդների սպասարկման վարչության պետին 2013թ. նոյեմբերին վճարվել է 30 մլն.400 հազ. դրամ հղիության և ծննդաբերության նպաստ: Նախածննդյան արձակուրդին նախորդած 12 ամիսների ընթացքում նրան վճարվել է շուրջ 18 մլն. դրամի պարգևատրում:

- «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերության արտաքին կապերի բաժնի պետին 2013թ. սեպտեմբերին վճարվել է 18 մլն 100 հազ. դրամ հղիության և ծննդաբերության նպաստ:

Նախածննդյան արձակուրդին նախորդած ժամանակաշրջանում՝ 2013թ. մարտին նրան վճարվել է 9,8 մլն դրամ, իսկ արձակուրդից անմիջապես 1 ամիս առաջ՝ 2013թ. օգոստոսին՝ 15,8 մլն դրամ պարգևատրում:

- «Նատալի Ֆարմ» ընկերության բժիշկ-կոնսուլտանտին 2013թ. սեպտեմբերին վճարվել է 16 մլն. 450 հազ.դրամ հղիության և ծննդաբերության նպաստ:

- «Երևանի կոնյակի գործարան» ընկերության տնօրենի տեղակալին 2013թ. մարտին վճարվել է հղիության և ծննդաբերության նպաստ՝ 9 մլն 918 հազ. դրամ:

2012թ. հոկտեմբերին նրան վճարված աշխատավարձը և հավելավճարը կտրուկ բարձրացել է՝ կազմելով 5 մլն 216 հազ. դրամ:

Ավելին՝ հղիության և ծննդաբերության նպաստ ստանալուց հետո վերջինս, գտնվելով հետծննդյան արձակուրդում, ապրիլին ստացել է 2 մլն. 400 հազ.դրամ, մայիսին՝ 1 մլն. 380 հազ.դրամ, հունիսին՝ 1 մլն. 500 հազ.դրամ աշխատավարձ և հավելավճարներ:

Ժամանակավոր անաշխատունակության (հիվանդության) նպաստ

Հիվանդության նպաստը վճարվում է ՀՀ կառավարության 14.07.2011թ. N1024-Ն որոշմամբ հաստատված կարգով: Վարձու աշխատողին տրվող ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում և վճարում է գործատուն՝ հիմք ընդունելով բժշկական հաստատության կողմից տրված ժամանակավոր անաշխատունակության թերթիկը, ընդ որում 3 աշխատանքային օրերի համար գործատուն նպաստը վճարում է իր միջոցների հաշվին, իսկ 5-րդ աշխատանքային օրվանից սկսած՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

2011թ. պետբյուջեով «Ժամանակավոր անաշխատունակության նպաստ» ծրագրի գծով նախատեսվել է 2,562,863.5 հազ.դրամ, 2012թ.՝ 2,599,434.4 հազ.դրամ, 2013թ.՝ 2,803,644.0 հազ.դրամ:

2011թ. ընթացքում «Ժամանակավոր անաշխատունակության նպաստ» ծրագրի գծով փաստացի ծախսը կազմել է 2,549,342.9 հազ.դրամ, 2012թ.՝ 2,913,040.9 հազ.դրամ, 2013թ.՝ 3,612,937.4 հազ.դրամ: Այսպիսով, 2012թ. համեմատ 2013թ.պետրյուզեից ավելի է վճարվել 699,896.5 հազ. դրամ, իսկ 2013թ. նախատեսվածից ավելի է վճարվել 809,293.4 հազ.դրամ:

Ժամանակավոր անաշխատունակության նպաստներ ծրագրով նախատեսված և վճարված գումարների (2011-2013թթ.) պատկերը հետևյալն է.

հազ.դրամ

Նպաստի տեսակը	ՀՀ պետական բյուջեով նախատեսված գումարը			Վճարված գումարը			2013թ. պետրյուզեով նախատեսվածից ավելի վճարված գումարը
	2011թ.	2012թ.	2013թ.	2011թ.	2012թ.	2013թ.	
Հիիության և ծննդաբերության նպաստ	2,247.2	3,096,470.1	3,111,195.1	3,927,940.0	3,646,735.8	5,038,531.0	1,927,335.9
Ժամանակավոր անաշխատունակության նպաստ	2,562.8	2,599,434.4	2,803,644.0	2,549,342.9	2,913,040.9	3,612,937.4	809,293.4
ԸՆդամենը	4,810.0	5,695,904.5	5,914,839.1	6,477,282.9	6,559,776.7	8,651,468.4	2,736,629.3

2011-2013թթ. ընթացքում մի շարք կազմակերպություններում գրանցվել է ժամանակավոր անաշխատունակության նպաստների վճարման ակնհայտ աճ: Այսպես՝

«Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ընկերությունում 2011թ. 951 աշխատողի դիմաց ներկայացվել է թվով 257 անաշխատունակության թերթիկ՝ (27.0%), վճարվել է 17.0 մլն դրամի նպաստ, իսկ 2013թ.՝ 1015 աշխատողի դիմաց ներկայացվել է թվով 1001 անաշխատունակության թերթիկ՝ (98.6%), վճարվել է 88.5 մլն դրամի նպաստ, կամ 2011թ. համեմատ վճարվել է 71.4 մլն դրամ ավել գումար:

«Ղանդի Փրիշս Սեթալս Կապան» ընկերությունում 2011թ. 1225 աշխատողի դիմաց ներկայացվել է թվով 556 անաշխատունակության թերթիկ՝ (45.4%), վճարվել է 24.7 մլն դրամի նպաստ, իսկ 2013թ.՝ 1237 աշխատողի դիմաց ներկայացվել է թվով 996 անաշխատունակության թերթիկ՝ (80.5%), վճարվել է 57.5 մլն դրամի նպաստ, կամ 2011թ. համեմատ վճարվել է 32.8 մլն դրամ ավել գումար:

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ընկերությունում 2011թ. 3206 աշխատողի դիմաց ներկայացվել է թվով 1337 անաշխատունակության թերթիկ՝ (41.7%), վճարվել է 103.5 մլն դրամի նպաստ, իսկ 2013թ.՝ 3279 աշխատողի դիմաց ներկայացվել է թվով 2307 անաշխատունակության թերթիկ՝ (70.4%), վճարվել է 341.9 մլն դրամի նպաստ, կամ 2011թ. համեմատ վճարվել է 238.3 մլն դրամ ավել գումար:

«Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերությունում 2011թ. 846 աշխատողի դիմաց ներկայացվել է թվով 377 անաշխատունակության թերթիկ՝ (44.6%), վճարվել է 24.4 մլն. դրամի նպաստ, իսկ 2013թ.՝ 1048 աշխատողի դիմաց ներկայացվել է թվով 670

անաշխատունակության թերթիկ` (63.9%), վճարվել է 67.4 մլն դրամի նպաստ, կամ 2011թ. համեմատ վճարվել է 42.9 մլն դրամ ավել գումար:

ՀՀ կենտրոնական բանկում 2011թ. 791 աշխատողի դիմաց ներկայացվել է թվով 150 անաշխատունակության թերթիկ` (19%), վճարվել է 9.6 մլն դրամի նպաստ, իսկ 2013թ.` 909 աշխատողի դիմաց ներկայացվել է թվով 428 անաշխատունակության թերթիկ` (47.1%),վճարվել է 38.6 մլն դրամի նպաստ, կամ 2011թ. համեմատ վճարվել է 29.0 մլն դրամ ավել գումար:

2011-2013թթ. հաշվարկված և վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստների պատկերը հետևյալն է.

							հազ.դրամ
	Կազմակերպության անվանումը	տարե-թիվը	Աշխատողների թվաքանակը	Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների քանակը	Ձ	Վճարված գումար	2011թ. համեմատ 2013թ. ավելի վճարված գումարը
1	ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱՍՈՒԻԲԴԵՆԱՅ ԻՆ ԿՈՍԲԻՆԱՏ	2011	951	257	27.0	17,053.0	
		2012	1000	491	49.1	45,286.3	
		2013	1015	1001	98.6	88,525.8	71,472.8
2	ԹԵՂՈՒՏ	2011	668	262	39.2	10,061.7	
		2012	973	407	41.8	17,781.6	
		2013	1216	997	82.0	45,450.0	35,388.2
3	ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԵՏ.ԿԱՌ. ՀԻՄՆԱՐԿ	2011	634	263	41.5	12,520.2	
		2012	640	334	52.2	21,568.9	
		2013	674	553	82.0	20,346.7	7,826.4
4	ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ	2011	686	166	24.2	4,047.5	
		2012	770	283	36.8	8,756.0	
		2013	998	738	73.9	14,900.9	10,853.4
5	ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՍՈՒԻԲ-ԴԵՆԱՅԻՆ ԿՈՍԲԻՆԱՏ	2011	3206	1337	41.7	103,526.3	
		2012	3252	2341	72.0	296,019.3	
		2013	3279	2307	70.4	341,916.2	238,389.8
6	ԳԵՈՊՐՈՍԱՅՆԻՆԳ ԳՈՒԴ	2011	846	377	44.6	24,499.5	
		2012	966	496	51.3	37,423.8	
		2013	1048	670	63.9	67,488.4	42,988.8
7	ՀԱՅԱԷՐՈՆԱԿԻԳԱՑԻ Ա	2011	459	63	13.7	5,314.0	
		2012	473	146	30.9	19,233.1	
		2013	461	274	59.4	24,272.0	18,958.0
8	ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ	2011	105	39	37.1	1,209.8	
		2012	138	64	46.4	1,156.6	
		2013	171	147	86.0	4,349.8	3,140.0
9	ԴԱՆԴԻ ՓՐԻՇՍ ՄԵԹԱԼՍ ԿԱՊԱՆ	2011	1225	556	45.4	24,707.6	
		2012	1218	889	73.0	56,056.9	
		2013	1237	996	80.5	57,512.6	32,805.0
10	ԱՄԵՐԻԱ ԲԱՆԿ	2011	347	24	6.9	3,167.1	

	Կազմակերպության անվանումը	տարե-թիվը	Աշխատողների թվաքանակը	Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների քանակը	%	Վճարված գումար	2011թ. համեմատ 2013թ. ավելի վճարված գումարը
		2012	445	77	17.3	4,384.6	
		2013	516	365	70.7	19,945.7	16,778.5
11	ՀԱՅԲԻԶՆԵՍ ԲԱՆԿ	2011	501	105	21.0	4,685.9	
		2012	571	124	21.7	10,809.2	
		2013	632	329	52.1	22,940.2	18,254.2
12	ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ	2011	791	150	19.0	9,679.4	
		2012	805	235	29.2	26,213.1	
		2013	909	428	47.1	38,687.5	29,008.0
13	ՀԱՅԻՆԿԱՍԱՑԻԱ	2011	211	29	13.7	2,382.3	
		2012	211	61	28.9	5,571.8	
		2013	219	83	37.9	10,332.6	7,950.3
14	Ղ-ՏԵԼԵԿՈՍ	2011	1911	369	19.3	36,241.0	
		2012	1887	501	26.6	67,293.7	
		2013	1917	726	37.9	65,544.1	29,303.1
15	ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ	2011	366	41	11.2	2,948.3	
		2012	402	66	16.4	9,751.2	
		2013	431	151	35.0	22,097.5	19,149.1
16	ԱԿԲԱ-ԿՐԵՂԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ	2011	923	144	15.6	8,347.3	
		2012	986	194	19.7	37,934.2	
		2013	1111	359	32.3	29,926.0	21,578.7
17	ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ	2011	1016	120	11.8	5,817.9	
		2012	1137	192	16.9	12,172.3	
		2013	1300	418	32.2	22,121.7	16,303.8

Վերահսկիչ պալատի ուսումնասիրության արդյունքներից հետևում է, որ մի շարք կազմակերպություններ վերջին տարիներին բազմապատկել են ժամանակավոր անաշխատունակության գծով վճարված նպաստների ծավալները:

Վերոգրյալ խախտումների, թերությունների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվությունում:

2.11. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատը վերահսկողությունն իրականացրել է մի քանի ուղղություններով: Արձանագրվել են բազմաթիվ խախտումներ և թերություններ: «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից իրականացվող ծրագրերում բացահայտվել են կոռուպցիոն ռիսկեր, որոնք բացասաբար են անդրադառնում ոլորտի առջև ծառայած խնդիրների կարգավորմանը, մասնավորապես.

«Գյուղական ենթակառուցվածքներ»

Ծրագրի նպատակն է՝ բարելավել գյուղական անապահով համայնքների բնակիչների կենսամակարդակը և ապահովել տնտեսական աճ, ինչի համար նախատեսվել է 31.0 մլն ԱՄՆ դոլար:

Գեղարքունիքի, Սյունիքի, Տավուշի, Լոռու և Արագածոտնի մարզերի 28 համայնքների ենթակառուցվածքներում ներդրումների (հիմնականում՝ գազաֆիկացման աշխատանքներ) իրականացման համար ԾԻԳ-ը պայմանագրեր է կնքել մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված «ՍԱԴԵ ԲԸ (Ֆրանսիա) - Բլեսկ ՍՊԸ (ՌԴ)» ՀԶԳ-ի և «Եվրոպրոֆայլ» ՓԲԸ-ի հետ, համապատասխանաբար՝ 4.9 մլրդ դրամ և 803.4 մլն դրամ արժեքով:

Գազաֆիկացման աշխատանքներից ընտրանքային կարգով ստուգվել են 7 համայնքում կատարված աշխատանքները:

Խոզնավար, Խնածախ, Վաղատուր և Արտանիշ համայնքների գազաֆիկացման համար 613.3 մլն դրամ գումարով աշխատանքների ավարտից հետո էլ նշված համայնքները չեն կարող գազաֆիկացվել, քանի որ մայր գազատարները քայքայված են և չեն շահագործվել:

«Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն մինչ օրս չի ընդունել այդ գազատարները: Ընդհանուր առմամբ այդ քայքայված և չշահագործվող մայր գազատարների շինարարության ծախսը կազմել է շուրջ 147.6 մլն դրամ:

Նախկինում կառուցված անորակ և «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից չընդունված գազատարների մասով 2012 թվականին կնքված պայմանագրերում քայքայված և անպիտան խողովակների վերականգնման, փչամաքրման և փորձարկման աշխատանքների համար նախատեսվել է շուրջ 22.2 մլն դրամ գումար:

Վերահսկիչ պալատը առաջարկել է այդ գումարը չվճարել կապալառուին:

Սյունիքի մարզի Խնածախ համայնքում պայմանագրով խողովակների փչամաքրման համար նախատեսվել է ծախսել 21.2 մլն դրամ՝ 23704 գծամետրի համար: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ խողովակների երկարությունը (ներառյալ՝ նախկինում կառուցված գազատարը) իրականում ավելի քիչ է 4300 գծամետրով: Ավելի նախատեսված 4.7 մլն դրամը ենթակա է պայմանագրի գումարից նվազեցման:

Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի գազաֆիկացման աշխատանքների նախահաշվում մետաղական խողովակների փչամաքրման և փորձարկման միավորների սխալ կիրառման արդյունքում նախահաշվային արժեքն ավելի է հաշվարկվել 13.8 մլն դրամով:

Հաշվի առնելով արձանագրված բոլոր թերությունները, Վերահսկիչ պալատն առաջարկել է Սյունիքի մարզի Խնածախ և Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքների գազաֆիկացման աշխատանքների պայմանագրերի արժեքը 27.2 մլն դրամով նվազեցնել:

Վերահսկիչ պալատը ՀՀ կառավարությանն առաջարկել է նախկինում կառուցված անորակ, քայքայված և «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից չընդունված գազատարների մասով նյութերն ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն:

«Ներդրումներ»

Ծրագրի նպատակն է՝ խթանել գյուղական փոքր և միջին վերամշակող կազմակերպությունների տնտեսական ակտիվությանը՝ բաժնետիրական ներդրումների և փոխառությունների տրամադրման միջոցով:

Այս բաղադրիչով աշխատանքներն իրականացվում են «Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի» կողմից:

Ծրագրի գումարներից նախատեսվել է ընդհանուր 7,863.5 հազ. ԱՄՆ դոլար վարկային և դրամաշնորհային միջոցներ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցների հաշվին նախատեսվել է նաև հարկային պարտավորությունների և տուրքերի վճարումը:

Մինչև ստուգման պահը հիմնադրամի կողմից իրականացվել են 1.6 մլրդ դրամի ներդրումներ (նաև՝ փոխառություններ)՝ հետևյալ 9 կազմակերպությունում:

«Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ (ձկնարտադրություն)

Հիմնադրամը «Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ-ում կատարել է 200.0 մլն դրամի ներդրում, որի դիմաց ձեռք է բերել 29.55% բաժնեմաս 7 տարի ժամկետով, տարեկան առնվազն 30.0 մլն դրամ շահութաբաժնի վճարման պայմանով: «Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ-ն ստացված միջոցները պետք է ծախսեր ջրավազանի կառուցման, թթվածնի օքսիգեներատորների ձեռք բերման, աերատորների ձեռքբերման և տեղադրման, լաբորատորիայի վերանորոգման և լաբարատոր սարքերի ձեռքբերման և տեղադրման, ինչպես նաև թառափի մայրական կազմի ավելացման նպատակով:

«Փյունիկ ՏԹՖ» ՓԲԸ (թռչնարուծություն)

Հիմնադրամը «Փյունիկ ՏԹՖ» ՓԲԸ-ում կատարել է 200.0 մլն դրամի ներդրում, որի դիմաց ձեռք է բերել 27.01% բաժնեմաս 7 տարի ժամկետով, տարեկան առնվազն 30.0 մլն դրամ շահութաբաժնի վճարման պայմանով: «Փյունիկ ՏԹՖ» ՓԲԸ-ն ստացած միջոցները պետք է ծախսեր ինկուբատորային սարքավորումների, ածխե վառարանների, ճտի տեղափոխման հատուկ բեռնատար ավտոմեքենայի, կերաբաղադրամասերի և կերահավելումների ձեռքբերման նպատակով:

«365 Գրուպ» ՓԲԸ (գինեգործություն)

Հիմնադրամը «365 Գրուպ» ՓԲԸ-ում կատարել է 200.0 մլն դրամի ներդրում, որի դիմաց ձեռք է բերել 33.51% բաժնեմաս 7 տարի ժամկետով, տարեկան առնվազն 30.0 մլն դրամ շահութաբաժնի վճարման պայմանով: «365 Գրուպ» ՓԲԸ-ն ստացված միջոցները պետք է ծախսեր սառնարանային համակարգի, տարաների, պոմպերի, պաստերիզատորների, ֆիլտրերի, պիտակի հաստոցի, սարքավորումների մոնտաժման, տեղափոխման ծախսերի և գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով, ինչպես նաև՝ իրականացներ վերանորոգման աշխատանքներ, կատարեր շրջանառու կապիտալի համալրում:

«Հարպրոդ» ՓԲԸ (պահածոների արտադրություն)

Հիմնադրամը «Հարպրոդ» ՓԲԸ-ում կատարել է 200.0 մլն դրամի ներդրում, որի դիմաց ձեռք է բերել 28.91% բաժնեմաս 7 տարի ժամկետով, տարեկան առնվազն 30.0 մլն դրամ շահութաբաժնի վճարման պայմանով: «Հարպրոդ» ՓԲԸ-ն ստացած միջոցները պետք է ծախսեր պիտակավորման սարքերի, բեռնատար մեքենայի, մինի

բեռնատարների, գոլորշու մատակարարման կաթսայի, լցնող սարքի, փականող սարքի մասերի ձեռքբերման նպատակով, ինչպես նաև՝ շրջանառու կապիտալը պետք է համալրի 100.0 մլն դրամով:

«ՄԻՍ Նատուրալ» ՓԲԸ (հյուրերի արտադրություն)

Հիմնադրամը «ՄԻՍ Նատուրալ» ՓԲԸ-ում կատարել է 200.0 մլն դրամի ներդրում, որի դիմաց ձեռք է բերել 25.0004% բաժնեմաս 7 տարի ժամկետով, տարեկան առնվազն 30.0 մլն դրամ շահութաբաժնի վճարման պայմանով: Ընկերությանը տրամադրվել է նաև 200.0 մլն դրամի փոխառություն, տարեկան 10% տոկոսադրույքով, 5 տարի ժամկետով: «ՄԻՍ Նատուրալ» ՓԲԸ-ն ստացած միջոցներով պետք է ձեռք բերեր հիմնական միջոցներ և համալրեր շրջանառու կապիտալը:

«Զիզ Թաուն» ՓԲԸ (պանրագործություն)

Հիմնադրամը «Զիզ Թաուն» ՓԲԸ-ում կատարել է 115.0 մլն դրամի ներդրում, որի դիմաց ձեռք է բերել 33.26% բաժնեմաս 7 տարի ժամկետով, տարեկան առնվազն 17.5 մլն դրամ շահութաբաժնի վճարման պայմանով: Ընկերությանը տրամադրվել է նաև 48.0 մլն դրամի փոխառություն, տարեկան 12% տոկոսադրույքով, 5 տարի ժամկետով, որը 2012թ.-ին վաղաժամկետ մարվել է: «Զիզ Թաուն» ՓԲԸ-ն ստացած միջոցները պետք է ծախսեր շինությունների արտաքին վերանորոգման, ջեռուցման, անվտանգության համակարգի, կոմունիկացիաների, օդափոխիչ համակարգի իրականացման, սառնարանի, վերելակի կառուցման, կաթի մթերման երկու կետերի հիմնման, սարքավորումների ձեռքբերման և վերանորոգման, մինի բեռնատարի և այլ ակտիվների ձեռքբերման, ինչպես նաև՝ հունքի և այլ շրջանառու միջոցների համալրման նպատակով:

«Արալեռ ՏՈՏ» ՓԲԸ («Հովքար» ՄՊԸ, ոչխարաբուծություն)

Հիմնադրամը «Արալեռ ՏՈՏ» ՓԲԸ-ում կատարել է 90.0 մլն դրամի ներդրում, որի դիմաց ձեռք է բերել 44.27% բաժնեմաս 7 տարի ժամկետով, տարեկան առնվազն 13.5 մլն դրամ շահութաբաժնի վճարման պայմանով: Ընկերությանը տրամադրվել է նաև 50.0 մլն դրամի փոխառություն, տարեկան 12% տոկոսադրույքով, 5 տարի ժամկետով: «Արալեռ ՏՈՏ» ՓԲԸ-ն ստացված միջոցներով պետք է իրականացներ մայր ոչխարների ներմուծում և շինարարական աշխատանքներ, ինչպես նաև՝ կատարեր շրջանառու կապիտալի համալրում:

«Մեղրիի պահածոների գործարան» ՓԲԸ (պահածոների արտադրություն)

Հիմնադրամը «Մեղրիի պահածոների գործարան» ՓԲԸ-ում կատարել է 50.0 մլն դրամի ներդրում, որի դիմաց ձեռք է բերել 27.51% բաժնեմաս 7 տարի ժամկետով, տարեկան առնվազն 7.5 մլն դրամ շահութաբաժնի վճարման պայմանով: Ընկերությանը տրամադրվել է նաև երկու փոխառություն՝ ընդհանուր 88 մլն դրամ, տարեկան 12% տոկոսադրույքով, 5 տարի ժամկետով: «Մեղրիի պահածոների գործարան» ՓԲԸ-ն ստացած միջոցները պետք է ծախսեր արտադրամասերի վերանորոգման աշխատանքների, նոր կաթսաների ձեռքբերման, կաթսայատան նորոգման և վերազինման, մեքենա-սարքավորումների նորոգման, փոքր բեռնատարողությամբ սառնարան մեքենա ձեռքբերելու, նոր այգիների և սառնարանային տնտեսության հիմնման, շրջանառու կապիտալի համալրման համար:

«Ազրոլոզ» ՓԲԸ (սառնարանային տնտեսություն)

Հիմնադրանը «Ազրոլոզ» ՓԲԸ-ում կատարել է 20.0 մլն դրամի ներդրում, որի դիմաց ձեռք է բերել 41.86% բաժնեմաս 7 տարի ժամկետով, տարեկան առնվազն 3.0 մլն դրամ շահութաբաժնի վճարման պայմանով: «Ազրոլոզ» ՓԲԸ-ն ստացած միջոցները պետք է ծախսեր սառնարանային սարքավորումների մոնտաժման, սառնարանի ջերմամեկուսացման, ավտոմեքենայի և մրգերի ձեռքբերման նպատակով:

Ստուգմամբ պարզվել է, որ՝

- «Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի» կողմից կազմակերպությունների բիզնեսի գնահատումը և դրա արդյունքում Հիմնադրամի բաժնեմասի չափի որոշումը կատարվել է սխալներով և հիմնադրամի՝ «Ներդրումների իրականացման և փոխառությունների տրամադրման ուղեցույց»-ից շեղումներով:

Ընկերություններում Հիմնադրամի կողմից կատարված ներդրումները կամ տրամադրած փոխառությունները հիմնականում ծախսվում են պայմանագրերով սահմանված ծախսային հոդվածների շեղումներով, այլ կերպ ասած՝ պայմանագրով ծախսման ուղղություններ սահմանելը հաճախ կրում է ձևական բնույթ:

Օրինակ՝

- «ՄԻՍ Նատուրալ» ՓԲԸ-ն բաժնեմասի ձեռքբերման պայմանագրով 2012թ. ընթացքում ՓԲԸ-ի հիմնական միջոցների և վերանորոգման աշխատանքների վրա կատարված ծախսերը սահմանվել է 155.08 մլն դրամ, սակայն, ըստ ներկայացրած փաստաթղթերի 2013թ.-ը ներառյալ, կազմել է 61.9 մլն դրամ:

- «Արալեռ ՏՈՏ» ՓԲԸ-ն պետք է ներմուծեր 900 գլուխ «Էդիլբաև» տեսակի ոչխար: Հիմնադրամի կողմից տրամադրված փաստաթղթերով ընկերությունը 2012-2013թթ.-ին ՌԴ-ից ներմուծել է ընդհանուր 366 գլուխ «Էդիլբաև» տեսակի ոչխար (01.11.2013թ. դրությամբ): **Սակայն 33 ԿԱ ՊԵԿ 04.12.2013թ. գրության համաձայն, ընկերության կողմից 33 տարածք ոչխար չի ներմուծվել:** Եվս 235 գլուխ տեղական գառներ ձեռք են բերվել ք. Աշտարակում, ինչը ոչ ներդրումային հայտով, ոչ էլ բաժանորդագրման պայմանագրով նախատեսված չի եղել⁵: Ծրագիրը կազմվել էր այն գաղափարի վրա, որ Հիմնադրամի ներդրումներով պետք է ներմուծվեին միայն «Էդիլբաև» տեսակի տոհմային ոչխարներ, որոնց հատկանիշների (մսատվություն, գառների ծնելիություն, քաշ և այլն) հիման վրա էլ կատարվել են հետագա իրացումների, շահույթի, հետևաբար նաև՝ Հիմնադրամին շահութաբաժինների վճարման և փոխառության մարման կանխատեսումները:

- Ինչպես արձանագրվել էր նախորդ վերահսկողության արդյունքում (2011թ.), այս անգամ ևս՝ չեն ապահովվում բաժնետոմսերի ձեռք բերման պայմանագրերով Հիմնադրամի և ընկերությունների կողմից երաշխավորված նվազագույն հիմնական գործառնական և ֆինանսական ցուցանիշները:

⁵ Հիմնադրամի կողմից ներկայացվել է ևս մեկ պայմանագիր՝ կնքված 2013թ. նոյեմբերի 2-ին, ըստ որի ՀՀ քաղաքացիներից ձեռք է բերվել ընդհանուր 680 գլուխ հյուսիսկովկասյան ցեղատեսակի մայր ոչխար:

Օրինակ`

«Չիզ Թաուն» ՓԲԸ

Պայմանագրով երաշխավորվել էր, որ 2012թ.-ին ընկերության զուտ իրացումը պետք է կազմի ոչ պակաս, քան 835,000.0 հազ. դրամ, սակայն փաստացի կազմել է 66,800.0 հազ. դրամ, զուտ շահույթը պետք է կազմեր ոչ պակաս քան 60,980.0 հազ. դրամ, սակայն ընկերությունը շահույթ ստանալու փոխարեն կրել է վնաս` 17,900.0 հազ. դրամի չափով:

«Հարպրոդ» ՓԲԸ

Պայմանագրով երաշխավորվել էր, որ 2012թ.-ին ընկերության զուտ իրացումը պետք է կազմի ոչ պակաս, քան 693,000.0 հազ. դրամ, սակայն փաստացի կազմել է 376,000.0 հազ. դրամ, զուտ շահույթը պետք է կազմեր ոչ պակաս քան 115,000.0 հազ. դրամ, ընկերությունը շահույթ ստանալու փոխարեն կրել է վնաս` 93,400.0 հազ. դրամի չափով:

- Ներդրումներ/փոխառություններ ստացած ընկերությունները հիմնականում կրում են ֆինանսական դժվարություններ, ինչի արդյունքում վերջիններս դիմում են Հիմնադրամին` պայմանագրերով սահմանված նվազագույն շահութաբաժինների վճարման և փոխառությունների մայր գումարների մարման ժամկետները հետաձգելու համար, սակայն դրանից հետո էլ լիարժեք կատարվում վճարումները: Այսպիսով, 01.11.2013թ. դրությամբ Հիմնադրամի կողմից կատարված ընդհանուր 1.6 մլրդ դրամ ներդրումների/փոխառությունների արդյունքում նախապես ակնկալվող 327.7 մլն դրամի փոխարեն 01.11.2013թ. դրությամբ Հիմնադրամի համապատասխան հաշվին կատարվել է ընդամենը 170.9 մլն դրամի վճարում:

Ընկերությունների կողմից շահաբաժինների վճարման ժամկետի երկարաձգման համար ներկայացված պատճառաբանությունները (տեղեկատվությունը) որոշ դեպքերում չի համապատասխանում ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվության հետ:

Օրինակ`

- «Հարպրոդ» ՓԲԸ-ն դիմել է Հիմնադրամին շահութաբաժնի վճարումը հետաձգելու համար` պատճառաբանելով, որ 2012թ.-ին արտադրանքը ՌԴ արտահանելու պատճառով առաջացել է գումարների հավաքագրման խնդիրներ: Սակայն 26.08.2013թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի գրության համաձայն 2011, 2012թթ.-ին «Հարպրոդ» ՓԲԸ-ն արտահանում չի ունեցել:

- Ընկերությունների կողմից նվազագույն շահութաբաժինը վճարելու անհնարինության դեպքում, բաժանորդագրման պայմանագրերով նախատեսված է ընթացակարգ` այդ պարտավորությունը բաժնետերերի կողմից կատարելու համար (որի կատարման համար բաժնետերերը պատասխանատու են իրենց գույքով): Սակայն Հիմնադրամը, այս ընթացակարգը կիրառելու փոխարեն, երկարաձգում է շահութաբաժինների վճարման ժամկետները` ընդհուպ մինչև 2017 թվական:

- 01.11.2013թ. դրությամբ շահաբաժինների վճարման ժամանակացույցերը խախտելու պատճառով Հիմնադրամն ընդհանուր բոլոր կազմակերպությունների մասով հաշվարկել է 4.6 մլն դրամի ուշացման տույժ, որից գանձել է 1.4 մլն դրամը:

- Ընկերությունների հետ կնքված պայմանագրերի համաձայն, տնօրենների խորհրդի կողմից (որում պարտադիր է Հիմնադրամի ներկայացուցչի ներկայությունը) պետք է հաստատվեին կնքվելիք պայմանագրերի համար ծավալային կամ միավորի

արժեքի սահմանաչափերը, ինչպես նաև՝ հասարակ կոմերցիոն գործունեության չափորոշիչները: Սակայն այդ սահմանաչափերը և չափանիշները այդպես էլ չեն հաստատվել, արդյունքում լիարժեք չի ապահովվում Հիմնադրամի իրազեկությունն ու հսկողությունը ընկերության համապատասխան գործարքների մասով: Վերջինիս հետևանքով ընկերությունները կարող են կնքել տնտեսապես ոչ արդյունավետ (ռիսկային) գործարքներ և հայտնվել ֆինանսական լուրջ դժվարությունների առջև, օրինակ՝ «Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ-ն ապրանքների մատակարարման պայմանագրեր էր կնքել ֆինանսական խնդիրներ ունեցող ընկերությունների հետ:

. Հիմնադրամը, կանոնադրության համաձայն, իրավունք ունի դրամական փոխառություններ տրամադրել բացառապես իր դուստր կամ կախյալ ընկերություններին: Սակայն Հիմնադրամը «ՍԻՍ ՆԱՏՈՒՐԱԼ» և «Հովբար» ՍՊԸ (հետագայում Արալեռ ՏՈՏ ՓԲԸ)-ներին հատկացրել է դրամական փոխառություններ՝ տվյալ պահին չհանդիսանալով այդ ընկերություններում բաժնետեր:

• Ընկերություններում ֆինանսական հաշվետվությունների վարման ոլորտի խորհրդատվական ծառայությունները չեն կատարվում պայմանագրերով սահմանված ժամկետներում, վերջիններս պարբերաբար երկարաձգվում են: Սահմանված ժամկետներում չեն ավարտվում նաև ընկերություններում տարեկան աուդիտի աշխատանքները, քանի որ դրանք կնքելիս հաշվի չեն առնվում հաշվապահության վարման պայմանագրերի ժամկետները և դրանց երկարաձգումները: Դրա արդյունքում աուդիտ իրականացնող ընկերությունները չեն կարողանում ժամանակին ամփոփել աուդիտի արդյունքները՝ աուդիտի ենթարկվող կազմակերպություններում առկա ծրագրային խնդիրների, կամ փաստաթղթերի բացակայության պատճառով:

«Ենթավարկեր»

Ծրագրի նպատակն է՝ ենթավարկերի տրամադրում այն ծրագրերի համար, որոնք ուղղված են փոքր և միջին գյուղական բիզնեսի զարգացմանը, գյուղական տարածքներում մասնավոր և հասարակական ներդրումների խթանմանը: Աշխատանքներն իրականացվում են «Գյուղական ֆինանսավորման կառույց-ԾԻԳ» պետական հիմնարկի (այսուհետ՝ ԳՖԿ) կողմից՝ առևտրային բանկերի և ունիվերսալ վարկային կազմակերպությունների միջոցով:

1. ԳՖԿ-ն միջոցները ներգրավում է տարեկան 0.75 տոկոսով:
2. ԳՖԿ-ն իր հերթին ԱՄՆ դոլարը 4%-ով, իսկ ՀՀ դրամը 9.5%-ով տրամադրում է առևտրային բանկերին և ունիվերսալ վարկային կազմակերպություններին:
3. Առևտրային բանկերը գյուղացիներին կամ ընկերություններին ենթավարկեր են տալիս ԱՄՆ դոլարով՝ 10-14%-ով, ՀՀ դրամով՝ 15-20%-ով:
4. Ունիվերսալ վարկային կազմակերպությունները ենթավարկերը գյուղացիներին կամ ընկերություններին տրամադրում են ԱՄՆ դոլարով՝ 12-16%-ով, ՀՀ դրամով՝ 14-24%-ով:

01.01.2012-31.10.2013թթ. ժամանակահատվածում ԳՖԿ-ի կողմից առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջոցով ընդհանուր առմամբ իրականացվել են 2270 հայտի ֆինանսավորում՝ 10.28 մլն ԱՄՆ դոլարի և 1.5 մլրդ

դրամի չափով: Նշված ժամանակահատվածում ՈՒՎԿ-ների կողմից տրամադրված ենթավարկերի քանակը կազմում է տրամադրված ամբողջ վարկերի 92 տոկոսը: Պետք է նշել որ նախորդ վերհսկողության ընթացքում 01-04-2008 - 31-12-2011 ՈՒՎԿ-ների միջոցով տրամադրված ենթավարկերի քանակը կազմում է ամբողջ տրամադրված վարկերի ընդամենը 14.9 տոկոսը:

Տրամադրված ենթավարկերից Վերահսկիչ պալատն ընտրանքային ստուգել է 11 ծրագիր: Նշված 11 ծրագրերից 9-ում հայտնաբերվել են ստացված ենթավարկերի ոչ նպատակային օգտագործման կամ կատարված ծախսերը փաստաթղթերով չհիմնավորելու դեպքեր, ինչն արձանագրվել էր նաև նախորդ (2011թ.) վերահսկողություն արդյունքում:

- Օրինակ՝ 2012թ.-ի ապրիլին «Աշտարակի գինու-կոնյակի գործարան» ՍՊԸ-ին տրամադրվել է 31 հազ. ԱՄՆ դոլար վարկ: Վերը նշված վարկով ՍՊԸ-ն պետք է գներ նոր գերմանական արտադրության հոսքագիծ, քացախի արտադրության սարքավորումներ, որոնք պետք է ներմուծվեին արտերկրից, պետք է վերազինեին արտադրությունն արդիական սարքավորումներով, և արդյունքում պետք է ունենային նոր արտադրատեսակ՝ քացախ: Տեղում կատարված այցելությամբ պարզվեց, որ ՍՊԸ-ի համապատասխան գործարանի համար հատկացված տարածքում, որն արդեն տևական ժամանակ է ինչ չի օգտագործվում որպես գինու-կոնյակի գործարան, առկա չեն վերոնշյալ սարքավորումները: Ավելին՝ ՊԵԿ-ի պաշտոնական վեբ կայքի տեղեկատվության համաձայն, «Աշտարակի գինու-կոնյակի գործարան» ՍՊԸ-ն 2012թ. հունվարի 1-ից դադարեցրել է իր գործունեությունը:

- 2012թ. նոյեմբերի 29-ին Նահապետյան Աշոտ Ա/Զ-ին տրամադրվել է 49,000 ԱՄՆ դոլար վարկ, որով Ա/Զ-ն պետք է 30 հազ. ԱՄՆ դոլարի չափով ձեռք բերեր խոշոր եղջերավոր անասուն, 7 հազ. ԱՄՆ դոլարով՝ անասնակեր, 12 հազ. ԱՄՆ դոլարով պետք է կատարեր շինարարական աշխատանքներ անասնագոմի վրա: Տեղում կատարված այցելությամբ պարզվեց, որ Նահապետյան Աշոտ Ա/Զ-ն չունի կատարված աշխատանքների և ձեռքբերված ապրանքների ծախսերը հիմնավորող փաստաթղթեր:

- 2012թ. հոկտեմբերի 16-ին Նաիրա Յովսեփյան Ա/Զ-ին տրամադրվել է 150.0 հազ. ԱՄՆ դոլար վարկ, որով Ա/Զ-ն պետք է ձեռք բերեր մայրացու խոզեր և կեր: Տեղում կատարված այցելությամբ պարզվեց, որ Ա/Զ-ն չունի կատարված աշխատանքների և ձեռքբերված ապրանքների ծախսերը հիմնավորող փաստաթղթեր:

- 2012թ. նոյեմբերի 7-ին «Ավթանդիլ Հարությունյան» ՍՊԸ-ին տրամադրվել է 18.0 հազ. ԱՄՆ դոլար վարկ՝ ավտոլվացման կետի և հացաբուլկեղենի արտադրամասի կառուցման նպատակով: Տեղում կատարված այցելությամբ պարզվեց, որ առկա էր ընդամենը կիսակառույց շինություն, որն այդ պահին չէր ծառայում ոչ որպես հացաբուլկեղենի արտադրամաս, ոչ էլ՝ որպես ավտոլվացման կետ: «Ավթանդիլ Հարությունյան» ՍՊԸ-ն նույնպես չունի կատարված աշխատանքների և ձեռք բերված ապրանքների ծախսերը հիմնավորող փաստաթղթեր:

- Վերահսկիչ պալատը Կառավարությանն առաջարկել է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ ենթավարկերը ԳՖԿ-ի կողմից անմիջապես գյուղացիներին և ընկերություններին տրամադրելու, կամ բանկերի և ունիվերսալ վարկային կազմա-

կերպությունների կողմից տրամադրվող ենթավարկերի տոկոսները կրճատելու ուղղությամբ:

«Աջակցություն պտղի և ընկուզեղենի արտադրությանը»

Ծրագրի նպատակն է՝ աղքատ և փոքր սեփականատերերին հայկական մրգի և ընկուզեղենի արտադրության մեջ ներգրավելով մեծացնել նրանց ունեցվածքն ու եկամուտները:

Ընդհանուր առմամբ, ծրագրի օգտակարությունն ակնհայտ է, ինչի արդյունավետ իրականացման դեպքում համապատասխան եկամուտներով կապահովվեն ինչպես «Հայկական միրգ» ընկերությունը, այնպես էլ՝ ծրագրում ընդգրկված գյուղացիական տնտեսությունները՝ կրճատելով աղքատության մակարդակը և խթանելով հայկական մրգի և ընկուզեղենի արտահանումը:

Ծրագիրը մեկնարկել է 2011 թվականին և այն իրականացնում է «Հայկական միրգ» ԲԲԸ-ն: Ծրագրի բյուջեն կազմում է 13.5 մլն ԱՄՆ դոլար: Ակնկալվում էր իրականացնել շուրջ 700հա ծիրանի, դեղձի և ընկուզեղենի այգիների հիմնում՝ 400-500 մանրածավալ, աղքատ գյուղացիական տնտեսությունների հետ:

Ստուգմամբ պարզվում է, որ բաղադրիչի իրականացման տեմպերը շատ ցածր են: Պարբերաբար կրճատվում են համապատասխան տարիներին ստեղծվելիք այգիների տարածքները: Նույնիսկ այդ դեպքում՝ փաստացի հիմնված այգիների տարածքը հեռու է ծրագրավորված ցուցանիշներից:

2011թ. հունիսին Ծրագրի ղեկավար խորհուրդը որոշել է ի սկզբանե նախատեսված 700 հա այգիների փոխարեն ստեղծել 306 հա այգի, սակայն այդ պարագայում ծրագրի բյուջեն մնում է անփոփոխ:

Սակայն վերը նշված ցուցանիշները ևս մեկ անգամ փոփոխվել են (կրճատվել են) 28.11.2012թ.-ի նոյեմբերի 28-ին ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի կողմից հաստատված 2013թ. պլան-բյուջեով՝

ա/ 2013թ.-ի համար նախատեսված 148հա-ը կրճատվել է և նախատեսվել 43.6հա, բ/ 2014թ.-ի համար նախատեսված 158հա-ը կրճատվել է և նախատեսվել 45-50հա, գ/ մնացած շուրջ 212հա այգիների ճակատագիրը մնում է անհայտ, դ/ ծիրանի արտադրությունն ընդհանրապես հանվել է ծրագրից այն դեպքում, երբ բիզնես-պլանով տնտեսագիտական հաշվարկներում մեծ տեղ էր զբաղեցնում ծիրանի արտադրությունից ստացվող եկամուտը:

Սակայն ստուգմամբ պարզվում է, որ 2013 թվականի համար նախատեսված 43.6 հեկտարի փոխարեն փաստացի այգի հիմնվել է միայն Տավուշի մարզի Արճիս համայնքում՝ 4.28հա տարածքում, այն էլ՝ առանց Ծրագրով նախատեսված ոռոգման համակարգի և հակակարկտային ցանցի, ինչը պարտադիր պայման է ինչպես տարեկան պլան-բյուջեով, այնպես էլ՝ բիզնես-պլանով:

Աշխատանքներն իրականացվում են բիզնես-պլանով նախատեսվածից բարձր գներով:

Օրինակ՝ 2012թ. բիզնես-պլանի համաձայն, ստեղծվելիք դեղձի այգու 1հա-ի հաշվարկով պետք է ծախսվեր 10.0 մլն դրամ: Արճիս համայնքում ստեղծված դեղձ/նեկտարի մի այգու մասով, համաձայն ՎՊ ուսումնասիրության, 1հա-ի հաշվարկով ծախսերը կազմում է 13.3 մլն դրամ, իսկ եթե դրան գումարենք նաև այգու

համար պարտադիր պայման հանդիսացող հակակարկտային ցանցի համար նախատեսված գումարը (1հա-ի հաշվարկով շուրջ 9.6 մլն դրամ), ապա 1հա-ի հաշվարկով ծախսը կկազմի 22.9 մլն դրամ:

Իտալական կազմակերպությունից ձեռք է բերվել 10000 հատ ընկուզենու պատվաստացու՝ 16.5 մլն դրամ արժեքով, որոնք պետք է պատվաստվեին «Արագածոտնի ԳԱՄԿ» ՓԲԸ-ից 4.8 մլն դրամ արժեքով ձեռքբերված 10000 հատ ընկուզենու սերմերից ստացվելիք պատվաստակալներով:

Ստուգմամբ պարզվել է.

1. Իտալիայից ձեռք բերված 10000 հատ ընկուզենու պատվաստացուները 16.5 մլն դրամ արժեքով ամբողջովին փչացել են իտալացի փորձագետի կողմից կատարված պատվաստման արդյունքում:

2. Նույն պատվաստման արդյունքում փչացել է նաև «Արագածոտնի ԳԱՄԿ» ՓԲԸ-ից ձեռք բերված 10000 հատ պատվաստակալներից 3640 հատը՝ 1.7 մլն դրամ արժեքով: Մնացած 6360 հատ պատվաստակալների հետագա օգտագործումը հարցականի տակ է: Ընդ որում՝ այդ 6360 հատ պատվաստակալների պահպանման և խնամքի համար լրացուցիչ ծախսվել է 2.1 մլն դրամ:

3. Վերոնշյալ պատվաստումների մեթոդի և սցենարների մշակման, ինչպես նաև՝ այդ պատվաստման նախապատրաստական աշխատանքների համար իտալացի փորձագետին վճարվել է շուրջ 6.4 մլն դրամ:

Արդյունքում՝ չհաջողված պատվաստման մասով կատարված 24.6 մլն դրամ ծախսը դիտվում է անարդյունավետ:

«Հայկական միրգ» ԲԲԸ-ի կողմից կատարված՝ 1,146.3 հազ. ԱՄՆ դոլար ծախսից 785.6 հազ. ԱՄՆ դոլարը (68.5 տոկոս) կազմում է միայն ԲԲԸ-ի պահպանման և գրասենյակային ծախսերը, որը, 01.11.2013թ. դրությամբ ունի հետևյալ պատկերը.

	ԱՄՆ հազ. դոլար		
	2012թ.	2013թ.	2012 և 2013թթ.
«Հայկական միրգ» ԲԲԸ-ի պահպանման ծախսեր			
Անձնակազմի աշխատավարձ	72.0	125.1	197.2
Ավտոմեքենաների սպասարկում, վառելիք	8.3	15.6	23.9
Գործառնական այլ ծախսեր	26.8	74.1	101.0
ԸՆԴԱՄԵՆՆՆ	107.2	214.9	322.2
	2012թ.	2013թ.	2012 և 2013թթ.
«Հայկական միրգ» ԲԲԸ-ի գրասենյակի և տնկարանի ծախսեր			
Խորհրդատվական ծառայություններ	101.2	208.0	309.2
Տրանսպորտային միջոցների ձեռքբերում ⁶	78.2	37.3	115.6
Համակարգչային սարքավորումների ձեռքբերում	13.6		13.6
Հաշվապահական ծրագիր		9.7	9.7
Այլ ծախսեր	4.5	10.4	15.0
ԸՆԴԱՄԵՆՆ	197.7	265.6	463.3
ԸՆԴԱՄԵՆՆՆ պահպանման, գրասենյակի և տնկարանի ծախսեր	305.0	480.5	785.6

⁶ 2 հատ ավտոմեքենա գրասենյակի համար՝ 78,252 ԱՄՆ դոլար, 3 հատ ավտոմեքենա մարզային գյուղատնտեսների համար՝ 37,386 ԱՄՆ դոլար:

«Հայկական միրգ» ԲԲԸ-ն Հայաստանում ծիրանի, դեղձի և ընկուզենու այգիներ հիմնելու և ծրագրին աջակցելու նպատակով պայմանագիրը կնքել է Ջիմբաբվեում գրանցված աֆրիկյան «Մաքֆերսոն Քընսալթինգ Գրուպ» ընկերության հետ՝ 462.7 հազ. ԱՄՆ դոլար արժեքով: Ստուգման պահի դրությամբ աֆրիկյան ընկերությանն արդեն վճարվել էր 292.5 հազ. ԱՄՆ դոլար: Թե, ինչ ծառայության դիմաց է վճարվել այս գումարը, հնարավոր կլինի պարզել միայն հանդիպակաց ստուգմամբ:

Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ-ի կողմից իրականացվող ծրագրերը Վերահսկիչ պալատը համարում է ռիսկային: 2014 և հաջորդ տարիներին այդ ծրագրերը լինելու են Վերահսկիչ պալատի վերահսկողության դաշտում:

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրի վերաբերյալ

- «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող լոկալ ջրարբիացման ցանցերի կառուցման շինարարական աշխատանքներն իրականացվել են Հայաստանի Հանրապետության 6 մարզի (Արագածոտն, Գեղարքունիք, Լոռի, Շիրակ, Սյունիք և Տավուշ) անասնապահական ուղղվածություն ունեցող լեռնային և սահմանամերձ 54 համայնքում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար 2011-2013 թվականներին ծախսվել է 1,941,590.1 հազ. դրամ: Վերահսկողությունն իրականացվել է 5 մարզի 31 համայնքում: Վերահսկված 1,148,352.5 հազ. դրամ ծավալի շինարարական աշխատանքներում հայտնաբերվել է 15,407.3 հազ. դրամի խախտումներ, որի մեծ մասը վերահսկողության ընթացքում վերականգնվել է:

- ԾԻԳ-ի կողմից 2011, 2012 և 2013 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ ապրանքների ձեռքբերման համար ծախսվել է 1,397,076.0 հազ. դրամ:

Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնին և Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններին տրամադրվել է 13 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, իսկ 48 համայնքի արոտագտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին՝ 304 միավոր, այդ թվում՝ 45 կոոպերատիվներին 64 անիվավոր տրակտոր, 44-ին՝ 48 մամլիչ-բարդոցիչ և 48-ին՝ 192 միավոր այլ գյուղագործիքներ:

2011-2012 թվականների ընթացքում ԾԻԳ-ի կողմից ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկայի շուկայական գների ուսումնասիրությունից պարզվել է, գյուղատնտեսական տեխնիկական ձեռք է բերվել շուկայական գներին համապատասխան, երբեմն նաև շուկայականից ցածր գներով:

2.12. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Վերահսկիչ պալատը սկսած 2008 թվականից վերահսկում է բյուջետային միջոցներով իրականացվող շինարարական աշխատանքների օրինականությունն ու արդյունավետությունը:

Վերահսկիչ պալատի կողմից արձանագրվել էին.

- չկատարված աշխատանքների դիմաց վճարումներ
- անորակ աշխատանքներ
- գների արհեստական թանկացումներ
- նախագծային և շինարարական աշխատանքների տարաբնույթ խախտումներ
- թերի և սահմանված կարգի խախտումներով իրականացված տեխնիկական և հեղինակային հսկողություն և այլն:

Վերահսկողության արդյունքում խախտում թույլ տված բազմաթիվ սուբյեկտներ առ այսօր բավականին գումարներ են վերականգնել պետ.բյուջե, բացի այդ վերջիններիս կողմից վերացվել են նաև կատարված անորակ աշխատանքները: Վերահսկիչ պալատի կողմից ՀՀ կառավարությանը ներկայացվել է ուղորտում առկա խնդիրների և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված մի շարք առանցքային առաջարկություններ:

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատը շարունակել է իր վերահսկողական աշխատանքները և արձանագրել է մի շարք խնդիրներ և թերություններ: Մասնավորապես.

Դպրոցաշինության ծրագիր

Պետական բյուջեով ՀՀ քաղաքաշինության նախարարությունը 2006 թվականից սկսել է կրթական օբյեկտների շինարարության, վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքների ծրագիրը, որը շարունակվում է առ այսօր:

Թվով 74 օբյեկտների համար կնքված պայմանագրերի ընդհանուր արժեքն է 33,031,584.0 հազ.դրամ:

2006-2012 թվականների ընթացքում ծախսվել է 17,032,943,546.0 հազ.դրամ, սակայն որևէ օբյեկտի շինարարություն չի ավարտվել:

2013թ. ծախսվել է 5,735,863.6 հազ.դրամ:

74 օբյեկտների շինարարությունը ավարտելու համար ըստ պայմանագրերի անհրաժեշտ կլինի ծախսել ևս 11,469,534.0 հազ.դրամ:

Բացի վերը նշված գումարից, վերանախագծվող թվով 26 օբյեկտների տեխնիկական վիճակի բարելավմանն ուղղված աշխատանքների արդյունքում հնարավոր է ծախսվեն ևս զգալի գումարներ:

Ժամանակին ծրագրերը սկսելիս կառավարությունը հիմնանորոգվող, վերակառուցվող շենքերի ուժեղացման կամ սեյսմակայունության բարձրացման վերաբերյալ հարցերը պատշաճ չի ուսումնասիրել:

ՀՀ քաղաքաշինության նախարարության ԾԻԳ պետական հիմնարկը կազմավորվելուց հետո, վերջինիս աջակցությամբ 2012-2013թթ. «Հայսեյսմշին և ԿՊԳՀ» ԲԲԸ միջոցով ստացած մասնագիտական եզրակացությունների հիման վրա կատարվել է թվով 74 օբյեկտների տեխնիկական վիճակի հետազոտություն:

Ըստ վերը նշվածի՝ օբյեկտները դասակարգվել են հետևյալ կերպ.

1. թվով 26 օբյեկտներում 2006 թվականից մինչև 2013թ. ծախսվել է 5,858,155.0 հազ.դրամ: Վերոհիշյալ 26 դպրոցների շինարարությունը ավարտելու համար պետք է ծախսել ևս 4,751,782.0 հազ.դրամ: Սակայն ՀՀ քաղաքաշինության նախարարությունը որոշել է 2013թ.-ի բյուջեով ծախսել ընդամենը 1.0 մլրդ դրամ, շինարարությունը դադարեցնել մինչև 5-6 տարի ժամկետով և դպրոցները շահագործել այդ վիճակով:
2. թվով 11 օբյեկտներում 2006թ.-ից մինչև 2013թ. ծախսվել է 3,550,566.0 հազ.դրամ: 2013թ.-ին այս դպրոցների շինարարական աշխատանքները ավարտելու համար նախատեսվել է տրամադրել ևս 1,370,993.0 հազ.դրամ:
3. թվով 18 օբյեկտներում 2006թ.-ից մինչև 2013թ.-ը ծախսվել է 3,544,947.0 հազ.դրամ: Վերոհիշյալ օբյեկտների շինարարությունը ավարտելու համար անհրաժեշտ էր ծախսել ևս 4,695,237.0 հազ.դրամ: Սակայն նախարարությունը, որոշել է այդ 18 դպրոցների սեյսմակայունության աստիճանը բարձրացնելու նպատակով 2013թ.-ին նախագծային աշխատանքների համար ծախսել 189,000.0 հազ.դրամ, իսկ շինարարության համար 692,000.0 հազ.դրամ:
Այս օբյեկտների շինարարությունը ավարտելու համար ըստ կնքված պայմանագրերի անհրաժեշտ է շախսել ևս 3,800,000.0 հազ.դրամ և կատարել զգալի լրացուցիչ ծախսեր կապված ուժեղացման աշխատանքների հետ: Վերանախագծմանը զուգահեռ նախատեսվում են վերակառուցման աշխատանքներ:
4. թվով 8 օբյեկտներում 2006թ.-ից մինչև 2013թ.-ը ծախսվել է 1,635,759.0 հազ.դրամ: Նշված օբյեկտների շինարարությունը ավարտելու համար անհրաժեշտ էր ծախսել ևս 1,364,361.0 հազ.դրամ: Սակայն նախարարությունը, որոշել է 2013թ.-ին այդ 8 դպրոցների շինարարության համար գումար չհատկացնել, այլ սեյսմակայունության աստիճանի բարձրացման նպատակով նախատեսել միայն նախագծային աշխատանքներ 123,557.0 հազ.դրամ արժեքով:
5. թվով 11 օբյեկտներում 2006թ.-ից մինչև 2013թ.-ը ծախսվել է 2,195,854.0 հազ.դրամ: Նշված օբյեկտների շինարարությունը ավարտելու համար անհրաժեշտ էր ծախսել ևս 4,250,309.0 հազ.դրամ: Սակայն նախարարությունը որոշել է 2013թ.-ին ծախսել ընդամենը 895,230.0 հազ.դրամ:
Հարկ է նշել, որ վերը նշված օբյեկտների շինարարությունը չի ավարտվելու և դեռևս 3,360,000.0 հազ.դրամ անհրաժեշտ է լինելու աշխատանքները վերջնական ավարտին հասցնելու համար:
6. 2013 թվականին ՀՀ կառավարության N721-Ն որոշմամբ վերաբաշխված և տնտեսված գումարների հաշվին իրականացվել է թվով 10 նոր օբյեկտների վերանորոգման և հիմնանորոգման լրացուցիչ աշխատանքներ, ինչպես նաև նախագծերի լրանշակման աշխատանքներ:

Վերոհիշյալ վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ կառավարության դպրոցաշինության ծրագիրը տարիներ շարունակ չի ավարտվում: Ավելին, հստակեցված չեն պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման վերջնական ժամկետները: Նման մեթոդով իրականացվող դպրոցաշինության ծրագիրը հարցականի տակ է դնում պետական բյուջեի միջոցների ծախսման արդյունավետությունը:

Ստորև, պատկերված աղյուսակում ներկայացված է թվով 10 օբյեկտի շինարարության նկարագիրը.

Օբյեկտի անվանումը	Կնքված պայմանագրեր	Ըստ տարիների կնքված շինարարական կապալի պայմանագրերի գումարը՝ առանց տեխնիկական և հեղինակային հսկողությունների արժեքների									Մնացորդ	
		մլն. դրամ										
		2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	Ընդամենը		
Բ. Գյումրիի ՀՀ ԳԱԱ Ա. Նազարյանի անվան հիմնադրամ	814.4	197.8	88.7	24.6	51.3	20.2	29.4	29.4	78.6	520.4	293.9	
Բ. Գավառի թիվ 5 դպրոց	574.3	29.9		59.0	39.2	24.5	33.3	19.6	63.8	269.7	304.5	
Թիվ 189 դպրոց	553.2	19.9	108.9	79.8	37.8	25.0	49.0	19.6	51.6	392.0	161.1	
Մ. Գորգեսյանի անվան թիվ 158 դպրոց	507.3		48.7	59.8	40.0	24.5	44.2	19.6	49.5	286.4	220.9	
Թիվ 192 դպրոցի հիմնանորոգում	474.1		62.2	64.8	20.9	20.4	49.1	19.6	16.4	253.7	220.4	
Թիվ 93 դպրոցի հիմնանորոգում	736.2		167.4	68.9	39.3	24.5	48.4	19.6	127.7	496.0	240.1	
Գ. Աստղածորի դպրոցի հիմնանորոգում	491.9		39.2	38.6	30.9	24.5	33.3	19.6		186.5	305.4	
Գ. Եղվարդի արվեստի դպրոց	488.2		67.1	24.4	28.8	20.4	39.2	19.6	49.1	248.9	239.2	
Թիվ 100 միջն. դպրոց	506.0			26.7	27.3	25.9	49.0	19.6		148.7	357.2	
Թիվ 69 դպրոց /II փուլ/	589.0			79.8	103.4	25.1	49.1	19,646.0	24.4	301.6	287.3	
Ընդամենը	5,735.0	247.6	582.6	526.9	419.4	235.5	424.6	206.3	461.3	3,104.5	2,630.5	

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատն ընտրանքային կարգով ստուգել է 11 կրթական օբյեկտ, որոնց պայմանագրային ընդհանուր արժեքը կազմում է 878,400 հազ.դրամ, որի շրջանակներում հսկիչ-չափագրման է ենթարկվել 407,900.0 հազ. դրամի ծավալային աշխատանք:

Արձանագրվել է 4,982 հազ. դրամի անորակ աշխատանք, ծավալային հավելագրում չի հայտնաբերվել: Հարկ է նշել, որ ծավալային հավելագրումներ չեն հայտնաբերվել մարզպետարաններում և Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամում ստուգված շինարարական աշխատանքներում: Մինչդեռ, նախորդ տարիներին այդ ցուցանիշը մշտապես բավականին բարձր է եղել: Ակնհայտ է, որ կա դրական տեղաշարժ:

Ստորև, ներկայացվում է 2008-2013 թվականների շինարարական աշխատանքների ստուգումների համեմատական աղյուսակ:

Տարեթիվ	Գերատեսչություն	հազ.դրամ		
		Ընտրանքային կարգով ստուգված ծավալ	Ծավալային հավելագրում	%
2008	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	930,000.0	170,000.0	18.3
	ՀՀ նարգպետարաններ	739,000.0	42,700.0	5.8
2009	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	447,000.0	14,300.0	3.2
	ՀՀ Սոցիալական հիմնադրամ	519,100.0	19,600.0	3.8
	ՀՀ նարգպետարաններ	2,193,900.0	108,100.0	4.9
2010	ՀՀ նարգպետարաններ	1,560,000.0	107,500.0	6.9
2011	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	707,900.0	7,000.0	0.9
	ՀՀ Սոցիալական հիմնադրամ	510,200.0	9,700.0	1.9
	ՀՀ նարգպետարաններ	939,800.0	18,000.0	1.9
2013	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	408,000.0	0.0	0.0
	ՀՀ Սոցիալական հիմնադրամ	230,300.0	0.0	0.0
	ՀՀ նարգպետարաններ	187,200.0	400.0	0.0

Վերահսկիչ պալատի վերլուծությունները ցույց են տալիս, որ շինարարության ոլորտում դեռևս առկա են լրջագույն կոռուպցիոն ռիսկեր, որոնք, հատկապես արտացոլված և կենտրոնացված են շինարարության ծրագրավորման և նախագծանախահաշվային փուլերում, ինչպես նաև շինարարության անկատար և ոչ կենսունակ հսկողության համակարգերում:

Նախագծանախահաշվային փաստաթղթերում ուղղակի ծախսերի վրա կիրառվող տոկոսադրույքներ

Վերահսկողության ընդհանուր արդյունքները վկայում են, որ ոլորտում առկա ռիսկերի և խնդիրների առանցքում շարունակում է մնալ նախահաշիվներում ուղղակի ծախսերի վրա կիրառվող տոկոսադրույքների ուռճացված չափերը:

Վերահսկիչ պալատը ՀՀ կառավարությանն առաջարկել էր վերանայել շինարարական նախագծերի նախահաշիվներում կիրառվող տոկոսադրույքները:

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը և Երևանի ճարտասպետության և շինարարության պետական համալսարանը համատեղ վերանայեցին այդ տոկոսադրույքների չափերը. սակայն հետագայում Վերահսկիչ պալատի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանք ամենևին անաչառ չեն և չեն արտացոլում իրական պատկերը:

Հետագայում, 2013 թվականին Վերահսկիչ պալատի մասնագետները մշակեցին Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի նախագիծ և ներկայացրեցին ՀՀ կառավարությանը: Ըստ առաջարկի, շինարարությունում կիրառվող վերադիր ծախսերը և շահույթը պետք է հաշվարկվի միայն աշխատավարձից, այլ ոչ թե՝ նյութական ծախսերից: Եթե գործող կարգով

ուղղակի ծախսերի վրա կիրառվում է միջինը 83%, ապա Վերահսկիչ պալատի տարբերակով այն կազմում է միջինը 64%:

Միաժամանակ պետք է նշել, որ Վերահսկիչ պալատի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տոկոսադրույքների վերանայումը որևէ կերպ չի կարող բացասական ազդել շինարարության որակի վրա:

Չկորցնելով որակը, արդյունքում պետությունը յուրաքանչյուր տարի կարող է տնտեսել նախատեսված շինարարական ծավալի 19%-ի չափով գումար:

Հ/Հ	Նախահաշիվներում ուղղակի ծախսերի վրա կիրառվող տոկոսադրույքներ	ՀՀ կառ. 23.06.2011թ. թիվ 879-ն որոշմամբ հաստատված
1	Այլ նյութերի քանակը հաշվի առնող գործակից	5%
2	Փաթեթավորման և պահեստավորման ծախսեր	2%
3	Տրանսպորտային ծախսեր	5.72-13.2%
4	Վերադիր ծախսեր	13.3%
5	Շահույթ	11%
6	Ժամանակավոր շենքեր և շինություններ	1-8%
7	Կլիմայական պայմանների ազդեցություն	0.3-3.2%
8	Շինարարական աշխատանքներից հետո շինարարական աղբի տեղափոխում	0.15%
9	Փոքր ծավալի շինմոնտաժային աշխատանքների համար նախատեսվող լրացուցիչ ծախսեր	1-2%
10	Չնախատեսված ծախսեր	2-12%
11	ԱԱՀ	20%
12	Օժանդակ ծախսեր /կիրառվում է միայն ՀՍՆՀ-ում/	չկա
	Նախահաշիվներում կիրառվող տոկոսադրույքների հանրագումար	75.2%-116.5%

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական և համայնքային բյուջետային միջոցներով, վարկային միջոցներով և դրամաշնորհներով 2013 թվականին շինարարության ոլորտում ծախսվել է մոտավորապես 200.0 մլրդ դրամ գումար, ապա այս պարագայում հնարավոր տնտեսումը կարող էր կազմել 38.0 մլրդ դրամ:

Ուղղակի ծախսերի վրա կիրառվող տոկոսադրույքները կախված շինարարական օբյեկտից և աշխարհագրական դիրքից, համաձայն ՀՀ կառավարության որոշման, կարող է տատանվել 75.2 %-ից մինչև 116.5%:

Մինչդեռ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարբեր պետական մարմինների և կառույցների կողմից պատվիրված նախահաշիվներում կիրառվում են տարբեր տոկոսադրույքներ, մասնավորապես, եթե Քաղաքաշինության նախարարության դեպքում այն կիրառվում է 69-77%, մարզպետարանների դեպքում՝ 67-80%, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դեպքում՝ 74-81%, որոշ ԾԻԳ-երի կողմից մինչև 103%, ապա ՀՀ սոցիալական ներդրումների հիմնադրամի դեպքում այն կազմում է, պարզապես 47%: Ուշագրավ է նաև այն, որ տեղում կատարած համեմատական ստուգայցերը ցույց են տալիս, որ ՀՀ սոցիալական ներդրումների հիմնադրամի դեպքում կատարված նմանատիպ շինարարության որակն ամենևին չի զիջում մյուս մարմինների կողմից իրականացված շինարարության որակին:

Ստացվում է, որ պետությունը մինևույն բնույթի աշխատանքների պարագայում մի դեպքում շատ է ծախսում, իսկ մյուս դեպքում՝ քիչ:

Այսպիսով, Վերահսկիչ պալատի կարծիքով, նախահաշիվներում ուղղակի ծախսերի վրա կիրառվող տոկոսադրույքները անհրաժեշտ է կրճատել 19%-ով: Այդ առաջարկությունը պաշտոնապես ներկայացվել էր ՀՀ կառավարությանը:

Փոխարենը կրճատվում է շինարարության նախահաշիվներում կիրառվող նյութերի գները, որը չի համապատասխանում շուկայում գործող գներին և գնագոյացման հարցում ստեղծում է լրացուցիչ խնդիրներ:

Այսպիսով, խնդիրը կարգավորելու փոխարեն, ստեղծվել է մեկ այլ նոր խնդիր:

ՀՀ քաղաքաշինական փաստաթղթերի միասնական համակարգ

Ներկայում ՀՀ-ում շինարարությունն իրականացվում է դեռևս նախորդ դարի 60-80 ականների ԽՍՀՄ տարիներին մշակված թվով 170 քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա: Այսօր, դրանք լիովին համարժեք չեն ՀՀ օրենսդրությանը, միջազգային լավագույն փորձին և ներկա պահանջներին:

ՀՀ կառավարության կողմից ընդհանուր քաղաքաշինական նորմատիվ 170 գործող փաստաթղթերից առ այսօր վերանայվել է միայն թվով 10 հանրապետական և 18 միջպետական նորմ. ընդ որում այդ աշխատանքները կատարվել են 1995 թվականից մինչև 2009 թվականն ընկած ժամանակահատվածում:

Վերահսկիչ պալատի առաջարկությանն ընդառաջ, ՀՀ կառավարությունը 2013 թվականին ձեռնարկել է ևս 8 շինարարական նորմի վերանայում: Գործող 170 քաղաքաշինական նորմերից ընդհանուր առմամբ վերանայվել է միայն 28 նորմ, մինչդեռ համաձայն «Նորմավորման և ստանդարտացման համակարգ շինարարությունում. Հիմնական դրույթներ» ՀՀՇՆ I-1.01-95 փաստաթղթի, շինարարական նորմերի նորացումն ու վերանայումը պետք է իրականացնել ոչ ուշ, քան 5 տարին մեկ: Այդ պահանջը նույնպես չի պահպանվել: Այսինքն՝ բացի չմշակված 134 նորմերից, վերանայման են ենթակա նաև արդեն մշակված նոր նորմերը:

Հարկ է նշել, որ քաղաքաշինական նորմերի վերանայման գործընթացը բավականին դանդաղ է ընթանում, և եթե հիմք ընդունենք վերանայման աշխատանքների վերջին դինամիկան, ապա կարելի է ասել, որ դրանք կավարտվեն լավագույնը՝ 20 տարի հետո: Ակնհայտ է, որ տվյալ ուղղությամբ տարվող աշխատանքներում Կառավարությունը պետք է վերանայի իր մոտեցումները:

Տեխնիկական հսկողություն

Վերահսկողությամբ կրկին բացահայտվում են տեխնիկական հսկողության համակարգի անկատարության դեպքեր: Հսկողությունը մեծ մասամբ կրում է ձևական բնույթ: Դեռ ավելին, պետական գնումների շրջանակներում Վերահսկիչ պալատի կողմից կատարված առաջարկության հիման վրա ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ նախատեսվում է շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրով սահմանել դրույթ, ըստ որի, եթե երաշխիքային ժամկետի ընթացքում բացահայտվում են թերություններ, ապա տեխնիկական հսկողություն իրականացնող անձը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով»:

Սակայն, 2013 թվականի վերահսկողության արդյունքները վկայում են, որ կնքված գրեթե բոլոր պայմանագրերում (բացառությամբ Քաղաքաշինության նախարարության) կառավարության համապատասխան որոշման պահանջն անտեսվում է:

Հաշվետու տարում պետական մարմինների և գերատեսչությունների կողմից բյուջետային միջոցների հաշվին իրականացված շինարարական աշխատանքների նկատմամբ իրականացված վերահսկողությամբ արձանագրված խախտումներն ու թերությունները մանրամասն ներկայացված են Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվություններում:

2.13. ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր

Ծրագրի կատարման օպերատիվ վերահսկողության արդյունքները ցույց տվեցին, որ խորհրդատվական ծառայություններ մատուցող Սաֆեջ Էս. Ա. (Safege (Ֆրանսիա) և Էպտիսա (Eptisa (Իսպանիա) համատեղ ձեռնարկության կողմից չէին կատարվում պայմանագրային պարտականությունները:

Ըստ էության աշխատանքների որակի որևէ վերահսկողություն չէր իրականացվում: Կատարված աշխատանքները չէին համապատասխանում տեխնիկական մասնագրերով, ամերիկյան AASHTO և բրիտանական BS ստանդարտներով սահմանված նորմերի պահանջներին և որակական չափանիշներին: Աշխատանքների տեմպը դանդաղել էր, որակը՝ նվազել: Մասնավորապես՝

- Ենթահիմքի կառուցման համար օգտագործված նյութն իր հատիկաչափական կազմով չէր համապատասխանում տեխնիկական մասնագրի պահանջներին:
- Չէր ապահովվել հողային պաստառի վերին մակերևույթից ջրահեռացումը:
- Հիմքի շերտի խճանյութի տեղադրման աշխատանքները սկսվել էին կատարվել տեխնիկական մասնագրով սահմանված տեխնոլոգիական հաջորդականության խախտմամբ:

- Բյուրականի տրանսպորտային հանգույցի հենարանների միաձույլ բետոնով նորոգման աշխատանքներն իրականացվում էին անորակ, մասնագրի պահանջների խախտումով:
- Շինարարական շխատանքներն իրականացվում էին մասնագրով պահանջվող երթևեկության կազմակերպման և անվտանգության պահանջների խախտմամբ:
- Ցեմենտբետոնյա ծածկում Տեսակ-1 ցեմենտի փոխարեն օգտագործվում է Տեսակ-II ցեմենտ:
- Բետոնե ծածկի լայնական և երկայնական կարերը կտրված են սակայն վերջնամշակված չեն և չեն լցվել հերմետիկով կամ չեն ծածկվել պոլիէթիլենային ժապավենով:

Վերահսկիչ պալատի վերահսկողության արդյունքում.

- Ենթահիմքի համար օգտագործված նյութն իր հատիկաչափական կազմով համապատասխանեցվել է մասնագրի պահանջներին:
- Հիմքի շերտի խճանյութի տեղադրման տեխնոլոգիական հաջորդականության խախտման մասով ծրագրի կառավարման խորհրդատուն փոփոխել է խճանյութի տեղադրման տեխնոլոգիական հաջորդականությունը: Արդյունքում ակնկալվում է նաև տվյալ աշխատանքների համար նախատեսված պայմանագրային գնի նվազեցում:
- Հողային պաստառի վերին մակերևույթից ջրահեռացումը չի ապահովվել, սակայն հետագա շերտերի իրականացումից առաջ ապահովվել են տեխնիկական մասնագրով պահանջվող խոնավությունն և խտացումը:
- Կառավարման խորհրդատուն կապալառուին առաջարկել է նվազեցնել պայմանագրային գինը պայմանավորված Տեսակ-II ցեմենտի օգտագործման հետ և ներկայացնել հիմնավոր փաստաթուղթ առ այն, որ Տեսակ-I ցեմենտ Հայաստանի Հանրապետությունում չի արտադրվում:

Պետական նշանակության ավտոճանապարհների, տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում, պահպանում և շահագործում, Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրեր

Այդ ծրագրերով արձանագրված խախտումներն ու թերությունները հիմնականում համանման են և բավականին ընդհանրական, մասնավորապես.

- Շինարարական և հիմնանորոգման աշխատանքների կատարողական ակտերում փաստացի կատարվածից ավել են հաշվարկվել 12,309.0 հազ. դրամի աշխատանք:
- Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարողականներում ավել է հաշվարկվել 15,741.0 հազ դրամ:
- Աշխատանքներն ընդունելիս չեն իրականացվել նորմերով նախատեսված անհրաժեշտ բոլոր ստուգումները:
- Աշխատանքներն իրականացնելիս օգտագործված բիտումը չի ունեցել ծագման ու որակի հավաստագիր:

- Որոշ դեպքերում ասֆալտբետոնի խառնուրդում բիտումի և հանքային փոշու չափաբաժինը, ինչպես նաև բիտումի և օգտագործված խիճի մակնիշը չի համապատասխանում ՀՀՇՆ-ով, ԳՕՍՏ-ով և բաղադրատոմսով սահմանվածին:
- Լաբորատոր հետազոտությունների արդյունքներն արժանահավատ չեն:
- Մրցույթին մասնակցելու նպատակով մասնակիցների որակավորման պարտադիր պայման հանդիսացող կոնկրետ աշխատանքը հետագայում փոփոխության արդյունքում ամբողջովին հանվել է:
- Փոփոխությունների արդյունքում կատարվել է նախագծով անընդունելի համարված աշխատանք:

Ինչ վերաբերվում է ֆինանսական խախտումներին, ապա պետք է նշել, որ Տրանսպորտի և կապի նախարարությունում հաշվետու տարում ընտրանքային կարգով ստուգվել է 3,877,448.4 հազ. դրամի աշխատանք և հայտնաբերվել 28,051.3 հազ. դրամի ծավալային հավելագրում:

Համեմատության համար պետք է նշել, որ այդ ցուցանիշը նախորդ տարիներին եղել է ավելի բարձր, մասնավորապես.

Տարի	Ընտրանքային կարգով ստուգված ծավալ	հազ.դրամ	
		Ծավալային հավելագրում	%
2009	972,041.4	201,090.4	20.6
2010	1,027,061.9	87,566.0	8.5
2012	3,280,001.0	176,852.0	5.3
2013	3,877,448.4	28,051.3	0.7

Ակնհայտ է, որ այստեղ նույնպես կա դրական տեղաշարժ, ինչը պայմանավորված է նաև Վերահսկիչ պալատի կողմից իրականացվող վերահսկողությամբ:

Այնուամենայնիվ, Վերահսկիչ պալատի վերլուծությունները ցույց են տալիս, որ ճանապարհային շինարարության ոլորտում ևս առկա են լրջագույն ռիսկեր, որոնք, հատկապես արտացոլված և կենտրոնացված են շինարարության նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման փուլերում:

Որպես խնդրի կարգավորման հիմնական ուղի, Վերահսկիչ պալատը գտնում է, որ նախահաշիվներում ուղղակի ծախսերի վրա կիրառվող ուռճացված տոկոսադրույթներն անհրաժեշտ է կրճատել մինչև 19%:

Վերոգրյալ խախտումների, թերությունների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվությունում:

3. ՎԵՐԱՅՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջազգային կապերի արագ ընդլայնումը նպաստել է Վերահսկիչ պալատի վերահսկողական գործառույթների բարելավմանն ու լավագույն փորձի ներդրման հնարավորությունների ստեղծմանը:

1. Հաշվետու տարում միջազգային համագործակցության օրակարգը հիմնականում ձևավորվել է Վերահսկիչ պալատի կողմից հայտարարված հիմնական երկու առաջնահերթությունների՝ գնումների համակարգի և շինարարության ոլորտի վերահսկողության խնդիրներով:

Մասնավորապես.

- Արաբական Միացյալ Էմիրությունների բարձրագույն վերահսկիչ մարմնի հետ երկկողմ հարաբերությունների զարգացման նպատակով ք. Երևանում ստորագրվել է համագործակցության համաձայնագիր: Կողմերը պայմանավորվել են առաջիկայում համատեղ ուժերով ներդնել պետական գնումների ոլորտի վերահսկողության բարելավման նոր ծրագիր:

- Բոնում կնքված համագործակցության համաձայնագրի շրջանակներում Գերմանիայի /այդ թվում նաև Հեսսենի երկրամասի/ բարձրագույն վերահսկիչ մարմնի աջակցությամբ ներդրվելու է շինարարության ոլորտի վերահսկողության բարելավման նմանատիպ ծրագիր:

2. Դեռևս 2009թ. Նիդերլանդների Թագավորության հաշվիչ դատարանի և Վերահսկիչ պալատի հնգամյա համագործակցության արդյունքում հոլանդացի գործընկերներն մեծ դեր ունեցան ինչպես Վերահսկիչ պալատի տեխնիկական և տեղեկատվական տեխնոլոգիաների բազայի համալրման, այնպես էլ՝ միջազգային փորձի փոխանակման գործում:

2009-2013թթ. ժամանակահատվածում հաշվիչ դատարանի աջակցությամբ.

- համալրվեց Վերահսկիչ պալատի տեխնիկական բազան
- կազմակերպվեցին պաշտոնական և ուսուցողական այցեր
- իրականացվեց համատեղ պիլոտային վերահսկողություն՝ «աղբահանության և սանիտարական մաքրման» և «հարկային վարչարարության արդիականացման» թեմաներով
- իրականացվեցին վերապատրաստումներ:

3. Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության հիմնական ուղղությունը եղել է Վերահսկիչ պալատի կարողությունների զարգացումը, այդ թվում.

- Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցությունը /GIZ/ տեխնիկական աջակցություն կտրամադրի արդյունավետության վերահսկողության գործառույթի ուժեղացման նպատակով:

- Համաշխարհային բանկի աջակցությամբ կբարելավվի ֆինանսական և համապատասխանության վերահսկողության գործընթացը:

- ԵՄ “ՄԻԳՄԱ” ծրագրի աջակցությամբ առաջիկայում կբարեփոխվի պետական բյուջեի կատարման ՀՀ կառավարության տարեկան հաշվետվության վերաբերյալ ՀՀ վերահսկիչ պալատի եզրակացության տրամադրման գործընթացը: